Չնայած միջազգային համրությունը և միջուկային զենքի չտարածման դրոշմի փորձագետները Թեհրանի միջուկային գործունեությունը լայնորեն քննարկում են մոտավորապես 2000 թվից, Իրանի՝ «այ խաղաղ նկատառումներով միջուկային ծրագրի» մշակումը (առաջին հերթին՝ ուրանի հարստացման) իրականացվում է 1987թվից՝ ԻԻՀ և Պակիստանի միջև գաղտնի համաձայնագրի կնքման պահից, որի համաձայն Իսլամաբադը պետք է աջակցեր Իրանի հարստացման իրականացման ծրագրի զար-

գացմանը: Նշված ժամկետը կարելի է համարել միջուկային զենքի ստեղծման Իրանի փորձերի պատմության սկիզբը⁵:

Ենթադրվում է, որ Չինաստանի միջուկային համագործակցությունն Իրանի հետ սկիզբ է առել 1980-ականների կեսերին, ավելի կոնկրետ՝ 1985թ. հունիսին, Իրանի մեջբխի խոսնակ Հաշեմի Ռաֆասնջանի և պաշտոնախարար Մուստաֆա Մուհամմեդ Նաջջարի՝ Պեկին կատարած պետական այցի շրջանակներում գիտատեխնիկական համագործակցության վերաբերյալ պայմանագրի ստորագրմամբ⁶: Պայմանագրի գաղտնի՝ միջուկային համագործակցության մասով Պեկինը պարտավորվում էր օժանդակել 1984թ. Սպահանում ելիմնված Իրանի գլխավոր հետազոտական գործարանի կառուցման աշխատանքներին և Իրանին սուրբ-բիտիկական միջուկային երկու ռեակտոր տրամադրել: Սպահանի միջուկային կենտրոնի տասնյակ ինժեներներ 1988-1992թթ. ընթացքում որակավորում են ստացել ՉԺՀ-ում: 1980-ականների վերջերին Պեկինը Իրանին Սպահանի գործարանի ուրանի հարստացման գործում օգտագործվող փոքր էլեկտրամագնիսական կայտարուն տարանջատիչ է փաճառել⁷: Իսկ 1989թ. սեպտեմբերին ՉժՀ-ի և ԻԻՀ-ի միջև առաջի խաղաղ օգտագործման ոլորտում համագործակցության վերաբերյալ պայմանագիր է ստորագրվել, որն Իրանի խորհրդարանը վավերացրել է միայն 1993թ.⁸:

Իրանի և ՉժՀ-ի միջուկային համագործակցության խորացմանը նպաստեց 1980-90-ականներին ԱՄՆ-ի ուժգին ճնշման տակ Իրանում միջուկային գործարանի կառուցման վերաբերյալ մի շարք պայմանագրերի թե՛նքարանի գլխավոր մատակարարների՝ Արգենտինայի, Հնդկաստանի և այլ երկրների նյութարտար, հնչյուն նաև ԽՍՀՄ-ի փյուզումն ու Մատր պատերազմի ավարտը: Արդյունքում ԱՄՆ-ն՝ աշխարհի միակ գերտերության իր կարգավիճակը հավերժացնելու, իր համաշխարհային տիրապետությունը՝ այսպես կոչված Pax Americana-ն հաստատելու և ամրապնդելու նպատակով գլոբալ ռազմավարության առանցք դարձրեց ԱՄՆ-ին հակազդելու ունակ ուժի կենտրոնների՝ «պոտենցիալ բշնամիներին» ձևավորման կանխարգելումը⁹: Նման ուժի կենտրոններ էին դիպվում իսլամական և սինական երկրները, որոնց յվում՝ ԻԻՀ-ը և ՉժՀ-ը: Վերջիններս, գիտակցելով Վաշինգտոնի քիթախի վերածվելու և «կանխարգելիչ հարվածի» տակ հայտնվելու հավանականությունը, ԱՄՆ-ի դեմ համագործակցելու և սովորական սպառազինության զոնդ նրա առավելությու-

յանը «հակակշիռ ստեղծելու» նպատակով փորձում էին համատեղել իրենց ջանքերը զանգվածային ոչնչացման զենքի (ՋՈՁ) ձեռքբերման և զարգացման ոլորտում¹⁰:

Արդեն իսկ 1991թ. հուլիսին Իրանում ՉժՀ վարչապետ Լ.ի Փենի և ԻԻՀ նախագահ Աբբաս Հաշեմի Ռաֆասնջանի հետ հանդիպման ընթացքում կողմերն արահայտվեցին ԱՄՆ-ի համաշխարհային տիրապետության ու միջազգային հարաբերություններում աներկյան կարգերի հաստատման դեմ¹¹: Կողմերի միջև պայմանագիր ստորագրվեց Իրանի միջուկային ռեակտորի տեխնիկական վերազինման նպատակով շինացի փորձագետների տրամադրմամբ¹² և Սպահանի միջուկային գործարանի համար (20-30 մվտ հզորությամբ) հետազոտական ռեակտոր փաճառելու ինքաբերակ¹³:

Փաստենք, որ նախքան 1991թ., Պեկինը համաձայնագրի առկայության վերաբերյալ ԱՄՆ-ի տեղեկություններն «անհիմն» ու «անհիեր» էր համարում՝ հայտարարելով, որ ՉժՀ-ն Իրանի հետ ոչ մի միջուկային գործարք չի իրականացրել: Սակայն 1991թ. նոյեմբերին ՉժՀ-ի արագորձնախարարը պաշտոնապես ընդունեց 1989թ. և 1991թ. Իրանի և ՉժՀ-ի միջև միջուկային պայմանագրերի կնքման փաստը՝ հավաստելով, որ Իրանին նշանադրված միավորները նախատեսված են միայն խաղաղ նպատակներով օգտագործման համար և ենթակա են Ատոմային Եներգիայի Միջազգային Գործակալության՝ ԱԷՄԳ-ի (IAEA) հսկողությանը¹⁴: Չինական կողմը նաև փաստեց, որ առաջարկվող 20 մվտ հզորությամբ հետազոտական ռեակտորը չափազանց փոքր է տարածման փոսնգ ներկայացնելու տեսանկյունից¹⁵: Իր հերթին թե՛նքարան հավաստեց, որ որպես Միջուկային Չտարածման Պայմանագրի և Պայմանագրի Լրացուցիչ արձանագրությունը ստորագրող կողմ, Իրանը ենթակա է ԱԷՄԳ-ի տեսչների ստուգայցերին՝ ընդգծելով միջուկային ոլորտի զարգացմամբ և խաղաղ հետազոտություններով զբաղվելու իր օրինական իրավունքը, միաժամանակ հերքելով միջուկային զենքի ստեղծման կամ դրա զարգացման օրոգրյալը իր մտադրությունները¹⁶:

Հարկ է նշել, որ 1991թ. աշնանը ՉժՀ-ի նախագահ Յան Ծանկունի՝ Պակիստան և Իրան կատարած այցերը գնահատվեցին միջազգային զարգացումներում, հատկապես դրանցում ԱՄՆ-ի առաջատար դերի ստանձնման նկատմամբ Իրանի, ՉժՀ-ի և Պակիստանի դիրքորոշումներ-

րի վերանայման հնարավորություն: Ենթադրվում էր, որ ճշյալ երկրմերի միջև համագործակցությունն ու հարաբերությունների ընդլայնումը պետք է հանգեցնեի տարածաշրջանային անվտանգության նոր համակարգի հիմնադրմանը՝ Չինաստանի, Իրանի և Պակիստանի միջև պաշտպանական և ռազմական համագործակցության հաստատման ճևղ: 1992թ. սեպտեմբերին Իրանի նախագահ Ռաֆաանջանի՝ ՉԺՀ կատարած այցի ընթացքում կողմերի միջև պայմանագրի ստեղծագրվեց միջուկային ուղղուում համագործակցության շուրջ, որի շրջանակներում ՉԺՀ-ը պարտավորվում էր Սպահանի միջուկային կենտրոնի համալիր-հետազոտական աշխատանքների իրականացման նպատակով տարրեր սարքավորումներ և 300 մկտ հզորությամբ երկու ռեակտորներ տրամադրել: Նշվում էր ԱԷՄԳ-ի երաշխիքների ներքո պայմանագրի հետապնդած խաղաղ նպատակների մասին¹⁷:

1992թ. փետրվարի և 1993թ. նոյեմբերի ոչ պաշտոնական ստուգայելից հետո ԱԷՄԳ-ի պաշտոնյաները հայտարարեցին, որ Իրանի միջուկային գործունեությունը հետապնդում է խաղաղ նպատակներ¹⁸: Մինչդեռ ԱՄՆ-ը՝ «համոզված լինելով միջուկային զենքի ստեղծման» Իրանի գաղտնի մտադրության մեջ, ճնշում գործադրեց ՉԺՀ-ի վրա¹⁹, որն էլ 1992թ. հոկտեմբերին պաշտոնապես հրաժարվեց Իրանի հետ գործարքից՝ քացատրելով այն *տեխնիկական պատճառներով*: Սակայն դրանով փորձանաչուսթ միջուկային հետազոտությունների և տեխնոլոգիաների նախագծերի շուրջ չին-իրանական համագործակցությունը չդադարեց²⁰, որի մասին են վկայում կողմերի միջև 1993-1995թթ. միջուկային ոլորտում ստորագրված մի շարք պայմանագրերը: Նշենք, որ 1995-2005թթ. ընկած ժամանակահատվածում ՉԺՀ-ը Ռուսաստանից հետո դարձավ Թեհրանին սովորական ապառազիություն մատակարարող երկրորդ երկիրը²¹:

Սակայն 1996թ. մայիսին ԱՄՆ-ի շարունակվող ճնշման տակ ՉԺՀ-ը ստիպված եղավ հրաժարվել միջուկային տեխնոլոգիաների տրամադրման կամ երաշխավորված միջուկային ծրագրերի ստանալուց²²: 1997թ. հոկտեմբերին, բոտ տեղեկությունների, Պեկինը վաշինգտոնին հավաստյալորեց համագործակցության երկու ոլորտով սահմանափակվելու և Իրանի միջուկային ծրագրերին ցուցաբերվող նոր աջակցությունից հրաժարվելու մասին²³: 1998թ. ԿՀՎ-ը Կոնգրեսին ներկայացրեց իր գեկույցում հաստատեց, որ 1997թ. ՉԺՀ-ը դադարեցրել է Իրանի հետ միջու-

կային ոլորտում համագործակցությունը: ԱՄՆ-ի ճնշման տակ 1999թ. չինական կողմը համաձայնվեց դադարեցնել նաև 1998թ.-ից Իրանին ուսանի հարստացման ոլորտում օգտագործվող ֆտորաջրածնի վաճառքը²⁴:

Սակայն չին-իրանական միջուկային համագործակցությունը վերսկսվեց 2001թ. սեպտեմբերի 11-ի միջադեպից հետո, երբ «գորալ ահաբեկչության դեմ պայքարը» դարձավ ԱՄՆ-ի ազգային անվտանգության ռազմավարական հիմնարկատակ՝ ԱՄՆ-ին «իրավունք վերապահելով» ռազմավարական տեսանկյունից կարևոր և զարգացման ինքնուրույն ուղի բռնած երկրների (ոմսանց պիտակավորելով իրեն «միջազգային իրավունքները չհամաչաղ կամ ծայրահեղական երկրներ»): «չարիքի առնցքի երկրներ» և այլն) առաջխաղացումը կանխելու նպատակով ճնշում կամ պատժամիջոցներ կիրառել վերջիններից նկատմամբ²⁵: Աֆղանստանի հակահաբեկչական գործողության և իրաքյան ներխուժման արդյունքում ԱՄՆ-ում ու Կենտրոնական Ասիայում արևմտյան ռազմահանգրվանների տեղակայումն ու ամերիկյան ուժերով իրենց երկրների «չջրապատումը»²⁶, միջուկային տարածման խնդրի հետ կապված ԱՄՆ-ի միակողմանի կամ երկակի ստանդարտների քաղաքականությունը, Հնդկաստանի ու Պակիստանի՝ դե-ֆակտո միջուկային տերություններ դառնալու փաստը, ինչպես նաև ԱՄՆ-ի կողմից Միջին և ԱՄ-ի երկրների «ժողովրդավարացման» մտադրությունները մարտահրավերներ էին, որոնք չէին կարող չտատնոզել Պեկինին ու Թեհրանին: Իրանն իր անվտանգության հիմնական երաշխիք դիտելով «սեփական միջուկային զենքի ստեղծումը», հարցեր կրկին առդեց դեպի Պեկին: Անշուշտ, Իրանում իրաքյան կամ աֆղանական իրադարձությունների կրկնությունն ու ԱՄ-ի ողջ նավթն ԱՄՆ-ի հսկողության տակ հայտնվելու հետևանքաբ չէր բխում նաև Պեկինի շահերից²⁷:

Արդեն իսկ 2002թ. ապրիլին Չինա Չենինի քեհրանյան այցելության ընթացքում վերականգնվեց 1999թ. ԱՄՆ-ի ճնշման տակ Թեհրանի և Պեկինի միջև միջուկային ենթադրաչի ոլորտում ստեղծված համագործակցությունը²⁸, ինչ Iran News-ի 2002թ. ապրիլի նեկնարանության մեջ հերքվում էր երկու երկրների միջև «զանգվածային ոչնչացման զենքի արտադրության ոլորտում համագործակցության հնարավորությունը»²⁹: Վաշինգտոնն էլ պատժամիջոցներ կիրառեց (2002թ.) Իրանին ՉՈՁ-ի արտադրության ոլորտում կիրառվող նյութերի տրանսպորտման մեջ մեղադրվող չի-

նական երեք ընկերությունների նկատմամբ, որից հետո չինական կողմը միատեսակ դադարեցրեց Իրանի հետ միջուկային համագործակցությունը³⁰:

2003թ. չինական պետական ընկերությունները շարունակեցին Իրանին ցիբիլոնի արտադրության սարքավորումների արանադրումը³¹, որից հետո չինացի ինժեներներն օգնության ցուցաբերեցին Իրանի Սադանի արանի հանրում ու Սպահանի մոտ գտնվող արանի ցեմտրիֆուգայի գործարանում իրականացվող աշխատանքներին³²:

Իսկ երբ 2004թ. ԱՄՆ-ը՝ Թեհրանին մեղադրելով Չտարածման Պայմանագրի պայմաններին հետամուտ չլինելու մեջ, Իրանի գործը՝ «դրսյեն», առաջարկեց հանձնել ՄԱԿ-ի ԱՆ-ի քննարկմանը³³, Պեկինը, պաշտպանելով ճգնաժամը երկխոսության միջոցով խաղաղ կարգավորելու շուրջ ԵՄ-ի գրաված դիրքույալումը, սեպտեմբերին կասեցրեց այդ գործընթացը³⁴: 2004թ. սեպտեմբերի 18-ին ՄԱԿ-ում Չինաստանի ղեկավար Չան Ծանը հանդես եկավ հայտարարությամբ. «Իրանի միջուկային խնդիրը պետք է ամբողջությամբ լուծվի ԱԷՄԳ-ի շրջանակներում երկխոսության միջոցով: ՉԺՀ-ը դեմ է խնդիրը ՄԱԿ-ի ԱՆ-ին հանձնելուն»³⁵:

Պեկինը ողջունեց Թրանի հարստացման ժամանակավորապես դադարեցման վերաբերյալ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի՝ «նկրաեռայակի» հետ (նոյեմբերին) Իրանի համաձայնագրի ստորագրման փաստը, որին Թեհրանը գնաց ԵՄ-ի կողմից առաջարկվող անվտանգության, տնտեսական երաշխիքների դիմաց, ինչու չէ, նաև դիվանագիտական մեկուսացումից խուսափելու նպատակով³⁶: ԱԷՄԳ-ը հավանություն տվեց ԵՄ-ի և Իրանի միջև ստորագրված պայմանագրին: Պեկինը ևս ողջունեց Իրանի և ԵՄ-ի երեք երկրների հետ կնքված պայմանագիրը՝ արտահայտելով իր կառուցողական դերակատարությունը միջազգային հանրության այլ անդամների հետ ԱԷՄԳ-ի շրջանակներում խնդրի պատշաճ կարգավորման ուղղությամբ³⁷:

2005թ. սկզբին ԻԻՀ-ի և Հյուսիսային Կորեայի միջուկային զենքի ստեղծման հավանությունների դեմ ուժի կիրառման հնարավորության շուրջ Բուշի վարչակազմի հայտարարություններից³⁸ հետո Իրանը 2005թ. օգոստոսից վերականգնեց Սպահանի միջուկային գործարանի ուրանի հարստացման գործընթացը³⁹: ԱԷՄԳ-ի կառավարիչների խորհրդի հանդիպման

նախօրյակին (2005թ. նոյեմբերի 25-ին) Իրանի պատվիրակ Հուսեյն Մուսավին խնդրի քննարկման նպատակով մեկնեց Չինաստան⁴⁰:

2006թ. հունվարի կեսին, «նվառեռայակը» միացավ Իրանի գործը ՄԱԿ-ի ԱՆ-ի քննարկմանը հանձնելու նպատակով Ռուսաստանի և ՉԺՀ-ի աջակցության ձեռք բերման ուղղությամբ ԱՄՆ-ի դիվանագիտական ջանքերին⁴¹: Մակայն երեք Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության բարձրատիպից աշխատակիցների լոնդոնյան խորհրդակցությանը ընթացքում Մոսկվան Թեհրանի գործը ՄԱԿ-ին հանձնելու ուղղությամբ խոչընդոտելու նշանները ըստ էության ցույց տվեց, ապա նույնը չէր կարելի ասել ՉԺՀ-ի մասին: Պեկինը ընդունում էր Իրանի միջուկային ծրագրի դադարեցման նպատակով որոշ միջոցառումների կիրառման անհրաժեշտությունը՝ քաջատեղով ՄԱԿ-ի ԱՆ-ի շրջանակներում էին նախնորի քննարկման հնարավորությունը, որի դեպքում հազիվ թե պաշտպաներ Իրանի դեմ ներս պատժամիջոցի կիրառմանը⁴²:

2006թ. փետրվարին Պեկինը ԱԷՄԳ-ի կառավարիչների խորհրդի նեժամասնության հետ քվեարկեց Իրանի գործը ՄԱԿ-ի ԱՆ-ին հանձնելու օգտին, սակայն միացավ ԱԷՄԳ-ի խորհրդի մարտի 6-ի հանդիպման ընթացքում Թեհրանի նկատմամբ պատժամիջոցների կիրառման խնդիրը ՄԱԿ-ի ԱՆ-ին չհանձնելու կամ խնդրի քննարկումը հետաձգելու ուղղությամբ Մոսկվայի դիվանագիտական ջանքերին⁴³:

2006թ. մայիսին Վիեննայում կայանալիք հանդիպման նախօրեին չինացի դիվանագետները տարբեր նախարարակներով «միջուկային ակտիվ դիվանագիտություն» էին վարում ՄԱԿ-ի և ԱԷՄԳ-ի ետնաբեներում, խորհրդակցություններ անցկացնում իրենց իրանական գործընկերների հետ: Նախագահ Հու Չինթաոն անգամ հեռավորապես ունեցավ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի և ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշի հետ: Իսկ ԱԷՄԳ-ի խորհրդի հանդիպման ընթացքում Պեկինը կրկին միացավ Թեհրանի խնդիրը ՄԱԿ-ի ԱՆ-ին հանձնելու դեմ Մոսկվայի գրաված դիրքույնմանը⁴⁴:

Այնուամենայնիվ, 2006թ. հուլիսին ՄԱԿ-ի ԱՆ-ին վեճը հատուկաց ՉԺՀ-ից, Ռուսաստանից և Ֆրանսիայից կորզել 1696-րդ բանաձևի ընդունման հավանությունը, որով նախատեսվում էր Իրանի ուրանի հարստացման գործունեությունը մինչև օգոստոսի 31-ը շրջադադարեցնելու դեպքում, վերջինիս նկատմամբ ՄԱԿ-ի Խարտիայի 41-րդ հոդվածով նախատեսված

տեևովոր պատժամիջոցներ կիրառել⁴⁵; Հաշվի առնելով այն փաստը, որ Իրանը չէր պատրաստվում ենթարկվել ԱՄԿ-ի ԱԽ-ի պահանջներին, Պեկինն ու Մոսկվան պատժամիջոցների պարտադրման վերաբերյալ օգտատուս 31-ին հաջորդած ԱԽ-ի քննարկումների ընթացքում փորձեցին դրանք նվազագույնի հասցնել, հատկապես պատժամիջոցների կիրառումն Իրանում ՉԺՀ-ի և Ռուսաստանի տնտեսական շահերին վտանգ ներկայացնելու դեպքում⁴⁶:

Պեկինին բնականաբար չէր կարող չտեսնողել Իրանի նախագազային առաջունների մասնակի կամ լրիվ կորստի հնարավորությունը, որոնց փոխհատուցման և մատակարարման մյուս աղբյուրների ընդլայնման նպատակով ՉԺՀ-ի նախագահ Հու Յզինտունը դեռևս 2006թ. ապրիլին այցելել էր ՄԱ-ի մի շարք եկրներ, այդ թվում Մաուլայան Արաբիա: Նշենք, որ նախագահին իր շրջայցի վերջում այցելեց նաև Վաշինգտոն՝ քննարկելու Իրանի, Թայվանի ու Կորեական թերակղզու հետ կապված նիմնախնդիրները: Իրանի դեմ պատժամիջոցների կիրառման հավանությունը ձեռք բերելու հարցում Վաշինգտոնին ՉԺՀ-ի բացահայտ չլիսակայան փաստը վերջինիս կողմից Թայվանի ու Կորեական թերակղզու հարցում ԱՄՆ-ից ռազմավարական զիջումներ կորզելուց ուղղված քայլ գնահատվեց⁴⁷: Նշենք, որ պաշտոնական Պեկինը Թայվանի խնդիրը համարելով Չինաստանի ներքին խնդիր, հերքում էր նրա շուրջ որևէ «գործարքի հնարավորություն»⁴⁸:

Ուշագրավն այն է, որ 2007թ. հունվարի 10-ին Պեկինում Իսրայելի փառջապետ Է.Օլմերթը ՉԺՀ-ի Պեկոտիրիլի փառջապետ Վեն Չիաբայի հետ բանակցությունների ընթացքում՝ «քրեմլումով մոտեմալով» ՉԺՀ-ի և ԻԻՀ-ի միջև ենթերգետիկ և առևտրի օրոտում բարձր մակարայակի համագործակցությանը՝ առավել կարևորեց «ՄԱ-ի կայունությունը վտանգող իրանական սպառնալիքի դեմ պատժամիջոցների կիրառման ուղղությամբ ՉԺՀ-ի՝ իբրև ՄԱԿ-ի ԱԽ-ի մշտական անդամի աջակցությունը»: Պեկինը սերծեց Իսրայելի կոչը՝ հտտակեցնելով, որ Չինաստանը դեմ է Իրանի «միջուկային զենքի տեղեմման», սակայն ոչ խաղաղ նպատակներով միջուկային ձրագրերի զարգացմանը⁴⁹:

Պեկինում քաջ գիտակցում էին, որ Իրանի նկատմանը միջազգային ճնշումը լայն իմաստով պայմանավորված է ոչ թե Թեհրանի միջուկային ձրագրերի կամ տարածաշրջանային անարեկչական խնրերի հովա-

նավորման⁵⁰, այլ ԱՄՆ-ի և նրա որոշ դաշնակիցների, հատկապես Իսրայելի համար անհանդուրժելի իրանական քաղաքական վարչախմբի քնույրով: Միեղչեու Իրանի հետ լավ հարաբերությունների մեջ գտնվող Ռուսաստանը, ՉԺՀ-ը, Հնդկաստանը մտահոգված չեն նրա միջուկային ձրագրի հարցում՝ անշուշտ այն ԱԷՄԳ-ի հեկոտրոյան տակ մնալու նախապայմանով⁵¹: Չինացի որոշ վերլուծաբանների կարծիքով՝ Վաշինգտոնն անկողմնակալ չէ միջուկային տարածման խնդիրների հարցում, երբ Իսրայելին թույլ է տալիս միջուկային զենք ունենալ, միեղչեու ՄԱ-ի մյուս երկրների կողմից միջուկային զենքի արտադրությունը խիստ դատապարտում է: Կամ, երբ ԱՄՆ-ը 2005թ. հուլիսին Քաղաքացիական միջուկային ենթերգետի համագործակցության վերաբերյալ սպայմանագիր է կնքում Չտարածման Պայմանագիրը ստորագրող կողմ չհամարվող Հնդկաստանի հետ, միեղչեու Չտարածման Պայմանագիրը ստորագրող կողմ համարվող Իրանին աղբելում է օգտվել միջուկային տեխնոլոգիաների խաղաղ օգտագործման իրավունքից⁵²:

Իսկ Թեհրանի քաղաքական և տնտեսական գլխավոր գործընկեր, մասնավորապես «եկրաեռայիլը», որի համար Իրանն աշխարհաքաղաքական շահավետ դիրք է Լենթեռտիկ հարուստ պաշարներ ունեցող երկիր է, հաճում միջանկյալ դիրքորոշում է գրավում վերոնշյալ երկրների (Ռուսաստան, Չինաստան, Հնդկաստան) և ԱՄՆ-ի միջև: Անշուշտ, Եվրոպայի հետ հարաբերություններն ազդում են Թեհրանի տարածաշրջանային դիրքերի վրա՝ հատկապես ԱՄՆ-ի հետ առճակատման համատեքստում⁵³:

ՉԺՀ-ը կիսում է Ռուսաստանի և Եվրոպայի կարծիքն առ այն, որ Իրանի նկատմանը ճնշումները կարող են վերջինիս ստիպել հրաժարվել Չտարածման Պայմանագրից կամ ԱՄՆ-ի կողմից միակողմանի ռազմական գործողություններ սարքել:

Ըստ Եուրյան, Պեկինը շահագոգոված է Թեհրանին աջակցության հարցում, որի համար Թեհրանը կարող է ՄԱ-ի և Կենտրոնական Ասիայի աշխարհաքաղաքական խաղում դիվանագիտական լծակ, չինական ապրանքների արտահանման շուկա, գյուրալ ֆինանսական ճգնաժամի պայմաններում դիմամիկ աճ արճանագրող ՉԺՀ-ի արագ աճող տնտեսության համար Լենթեռտի կարևոր աղբյուր ծառայել⁵⁴: Պեկինը շահագոգոված է նաև Իրանի տարանցիկ հնարավորությունների օգտագործման՝ վերջինիս

հետ Պարսից ծոցի արաբական երկրների ածխաջրածնային պաշարների ՉԺՀ արտահանման նպատակով մի շարք խողովակաշարերի և միջազգային տրանսպորտային միջանցքների կառուցման հարցում⁵⁵։ Այս առումով կարևորվում է Հնդկաստանի, Իրանի և Ռուսաստանի միջև «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի կառուցումը, որի կենտրոնակայությունն ապահովող գործոնն կարող էր դառնալ նախագծին ՉԺՀ-ի մասնակցությունը⁵⁶։ Վերջինիս համալիր օգտագործումը կարող էր մեծացնել ԵՄ կողմից Եվրոպա-Կովկաս-Ասիա «SPUUSCL» միջազգային տրանսպորտային միջանցքի արդյունավետությունը։ Վերոնշյալ միջանցքների հատման կենտրոն Իրանն է, որի տրանսպորտային հնարավորությունները՝ երկաթուղային և ավտոմայրուղային ցանցը, Շանհայի Համագործակցության Կազմակերպության (ՇՀԿ) երկրների մեծ մասին էլ էր ապահովում Իրանի և Պարսից ծոցի մյուս երկրների նավարային հիմնական տեքնիկայների նկատմամբ⁵⁷։ Պեկինը մտադիր էր նաև մասնակցել իրանական «Նեկկա նախագծին», որով նախատեսվող նավթամուղը պետք է Թեհրանը կապեր Կաասպից ծովին և մեծ քանակությամբ դազախական նավթ արտամղեր ՉԺՀ⁵⁸։

Նշենք, որ Պեկինն իր «միջուկային ակտիվ դիվանդակապայմանագրերի» փորձում էր բարձրացնել իր եեղիմակությունը՝ իրրև միջազգային հանրության պատասխանատու և շահագրգիռ կողմի։ Միևնույն ժամանակ Պեկինը ձգտում էր խուսափել իր առևտրային համար առաջին գործընկերոջ՝ ԱՄՆ-ի հետ հարաբերությունների սրումից։ Մինչև 2008թ. օլիմպիական խաղերի նախօրեին Վաշինգտոնի հակաչինական քարոզչությունն ԱՄՆ-ի ձեռքին դարձել էր ինչպես ԱՄՆ-ՉԺՀ, այնպես էլ ՉԺՀ-արտերկիր հարաբերությունների վրա ազդող լուրջ լծակ, որը ստիպում էր Պեկինին ակտիվացնել երկուստեք խնդրանաբարյց հարցերի շուրջ շին-ամերիկյան բաժնակցությունները։ Այս համատեքստում Իրանին, քնականաբար, չէր կարող չմտառեղել իրանական միջուկային հիմնախնդրի նկատմամբ Պեկինի դիրքորոշման հնարավոր փոփոխությունը։

Փաստարևն թե՛ Իրանի միջուկային գործունեության ուղղվածությունը, և թե՛ նրա տնտեսական, ռազմաքաղաքական դերը ԱՄ-ում և նրա սահմաններից դուրս պայմանավորված է ԱՄՆ-ի, Ռուսաստանի, ԵՄ-ի և ՉԺՀ-ի միջև առկա ռազմավարական մրցակցությամբ, հատկապես այդ երկրների կողմից Իրանի նավթագազային պաշարների յուրացման գոր-

ծում ձեռք բերվող գերակայությամբ։ Այդ մրցակցությամբ հաղթող դուրս գալու և գերակայության հասնելու նպատակով Պեկինն անշուշտ կաջակցի Թեհրանին։ Այս առնչությամբ մտաբերում ենք ՉԺՀ-ի նախկին նախագահ Ֆզլան Ֆզանինի՝ 1994թ. հայտնած միտքը, որի համաձայն՝ ԱՄՆ-ի գերիշխանությամբ պետք է հակազդել՝ օգնելով այնպիսի երկրների, ինչպիսին է պայքարող Իրանը։

AGHAVNI HARUTYUNYAN

ON CHINA-IRAN NUCLEAR COOPERATION

Sino-Iranian nuclear cooperation dates back to the mid-1980s (in 1985), when Iran and China signed a major bilateral agreement on scientific and technical cooperation, that included a secret side agreement on nuclear cooperation. Evidence of nuclear cooperation between China and Iran began to emerge soon thereafter, with the delivery of a small calutron in 1987 and the training of Iranian nuclear technicians in China as of 1989 under a secret nuclear cooperation agreement, assisted in the construction of Iran's primary research facility, located at Isfahan, and also agreed to supply Iran with subcritical nuclear reactors - all under International Atomic Energy Agency (IAEA) safeguards. Western analysts suspected that some of this cooperation was intended to aid Iran's clandestine nuclear weapons program.

Since the end of the Cold War, the US has become the sole superpower in the world and in order to perpetuate its superpower position in the world, enhance its world hegemony and realize the so-called Pax Americana, the US has set as the core target in its global strategy to prevent the emergence of power centers capable of countering it. It is trying every means to stave off and contain those powers that, it thinks, might become its "potential rivals".

Chinese nuclear assistance to Iran accelerated in 1991, after the USSR collapse and when Iran's major nuclear suppliers of that time (Argentina and India) were preparing to cancel a series of contracts to build nuclear facilities in Iran as a result of intense U.S. pressure. In 1991, China and Iran announced China's agreement to supply Iran's first nuclear reactor, a 20 MW research reactor. Both China and Iran stressed that the reactor was intended solely for

peaceful purposes. Iranian President Rafsanjani visited China in September 1992 and an agreement was reached by China and Iran on the establishment of two 300-MW nuclear power plants for Iran. Concerning the objectives of the agreement, it had been said that peaceful use of nuclear energy was intended.

In the late 1990's the U.S. objected to China's assistance in the construction of Iranian uranium enrichment and conversion facilities. On 1997, it was reported that China will provide no new nuclear assistance to Iran and will complete two existing areas of cooperation and all other nuclear cooperation such as the construction of the uranium conversion facility will stop.

After the 9/11 incident when combating global terrorism become a major task and an imminent goal of its national security strategy, the US had not changed or given up its fundamental strategy to suppress the rising of some major nations. With regard to those countries that do not follow or take orders from the US but stick to their own road of development, the Bush administration has arbitrarily labeled, them as "rogue states", "axis of evil countries" and "tyranny outposts", and has done its utmost to sanction and suppress them.

According to the IAEA, China has probably provided nuclear technology to Iran. This fact, coupled with Washington's need to pressure China not to sell large quantities of anhydrous hydrogen fluoride to Iran in 2000, and rumours that Beijing may have also sold a blueprint for a facility to produce highly enriched uranium to Iran as part of the same deal, raises questions about the Sino-Iranian relationship and the possible future ramifications of continuing nuclear co-operation between China and Iran.

Since mid-2002, the central issue has been not the extent of the material assistance that China have provided to the Iranian nuclear program in the past but the political support that Beijing has extended, or might provide, to Tehran in the face of growing pressure primarily by the U.S. and its European allies.

Yet as of 2003, Chinese state-owned companies continued to service the Iranian zirconium production facility, a plant that should have been under IAEA safeguards but was not. Since then, a constant stream of intelligence has

indicated that Chinese engineers still assist at the Iranian uranium mine at Saghand and a uranium centrifuge facility near Isfahan.

On September 2004, like EU countries, China called for a peaceful resolution, rather than a military one, to resolve the Iran nuclear issue within the IAEA's framework through dialogue. China is opposed to referring the issue to the UN Security Council. On December 2004, European Union and Iranian representatives began negotiations for a long-term agreement on Iran's nuclear program, and the economic and security rewards Tehran could receive for its cooperation on the matter. Just prior to the November 25, 2005 meeting of IAEA Board of Governors, Iran's envoy, Hoseyn Musavian, was dispatched to China for discussions.

China joined Russia on February 2006 in diplomatic efforts to ease a crisis over Iran's nuclear work before a U.N. atomic meeting and avert any sanctions. Moscow and Beijing do not want an IAEA board meeting on March 6 to precipitate moves in the U.N. Security Council for sanctions against Tehran. Russia and China fear steps toward sanctions will only worsen the crisis by driving Iran into a corner and imperiling a U.N. inspections regime that Tehran has promised to retain.

Beijing has sought to balance its interests in the nuclear standoff by emphasizing both Iran's rights and obligations under the NPT. In their public remarks, Chinese officials have made explicit their opposition to Iran's acquiring nuclear weapons and have reportedly called upon Tehran to honor its treaty commitments and to cooperate fully with the IAEA. At the same time, they have strongly endorsed Tehran's position that, as an NPT signatory, Iran is entitled to access to nuclear technology and to nuclear energy for peaceful purposes.

It is impossible to note that once oil-independent, China has over the last decade become increasingly reliant on imports, which now account for 60% of its oil consumption, compared with only 6 percent in 1993. Tehran, the world's second largest oil producer, now provides 15-18 % of China's oil imports and in 2004 Zhuhai Zhenrong Corporation, an oil trading group owned by the Chinese government, concluded a \$20 billion deal to purchase 110 million tons of liquefied natural gas (LNG) from Iran over 25 years, beginning in 2008. So Iran can serve for Beijing as important fuel source for fast growing

economy of China especially in condition of global financial crises, as well as export market for Chinese products and diplomatic leverage of its geopolitic game in ME and Central Asia. China has interested also in using Iran's transit opportunities - to take a part in construction of various pipelines and transport corridors. In its turn focusing on oil, Iran is consciously looking eastwards, with a clear intent of reinforcing its linkages with China and India. In the long term, China also hopes to participate in an Iranian pipeline "Nekka project" (which would link Tehran to the Caspian Sea and when completed, the pipeline is expected to transport a huge quantity of oil from Kazakhstan to China), International North-South Transport Corridor (INSTC) - a multi modal transportation established in 2000 in St. Petersburg, by Iran, Russia and India for the purpose of promoting transportation cooperation among the Member States. This corridor connects India Ocean and Persian Gulf to the Caspian Sea via Islamic republic of IRAN, then is connected to St. Petersburg and North European via Russia Federation.

Some Chinese experts consider that the U.S. adopts different attitudes toward different countries according to its interests and its likes or dislikes as well as its relations with these countries. For instance, it allows its ally Israel to have nuclear weapons but firmly opposes any other countries in the Middle East to develop nuclear weapons. In order to win over India, the US has signed with it a nuclear agreement at the cost of NPT principles whereas it has opposed Iran to enjoy the right to peaceful use of nuclear technology. The Iranian chief negotiator for nuclear talks thus pointed out that it was a discriminative act that the United States had nuclear trade with non-signatory state to the NPT with nuclear weapons to possess nuclear technology.

ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ <http://www.iranatom.ru/reports/rep005.htm>.
- ² Perabo B.A., Chronology of Iran's Nuclear Program, Monterey Institute of International Studies, 1995, p.6.
- ³ Cordesman A., Weapons of Mass Destruction in Iran, Center for Strategic and International Studies, 1998, p. 23.
- ⁴ Pehlavi Mohammed Reza, Answer to History, N.Y., 1980, p. 177.

⁵ Արա Մահուրեայան, Իրանական միջուկային ծրագիրը կրճատվի՞ ՄԱԿ-ի ԱՅ-ում, "Zhamanak" Armenian-American Political Daily, 25.01.2006. <http://www.zhamanak.com/article/2117/>.

⁶ China Backs off from Iran, The Iran Brief, Policy, Trade & Strategic Affairs, Issue No. 40, 11.10.1997. <http://www.iran.org/tib/public/4001.htm>; John Calabrese, China and Iran: Partners Perfectly Mismatched, Middle East Institute, Manuscript, 18.08.2006. p. 5.

⁷ Bates Gill, Chinese Arms Export To Iran, Middle East Review of International Affairs, Journal, Vol. 2, No. 2, May 1998. <http://www.biu.ac.il/Besa/mcria/journal/1998/issue2/jv2n2a7.html>. Սպախանի կառույցը սկսել է գործել 1984թ., սակայն նախքան 1992թ. ԱՄՆ-ի կողմից հետաքրքրության անկազմունք չի հայտարարվել իբրև միջուկային գործարան:

⁸ <http://www.iimes.ru/rus/stat/2003/20-11-03.htm>.

⁹ Liu Qing, The Nonproliferation Regime: Challenges and Prospects, China International Studies, Summer 2007, Beijing, p. 127.

¹⁰ Хантингтон С., Столкновение цивилизаций, М., 2003, с. 284.

¹¹ FBIS-NES-91-131, 9.07.1999, p. 66.

¹² Mohamed Bin Huwaidin, Mohamed Mousa Mohamed Ali Binhuwaidin, China's Relations with Arabia and the Gulf, 1949-1999, Published by Routledge, 2002, p. 168.

¹³ Bates Gill, նշվ. աշխ.:

¹⁴ China's Nuclear Exports and Assistance to Iran, James Martin Center for Nonproliferation Studies at Monterey Institute of International Studies, 09.23.2003. <http://www.nti.org/db/China/niranpos.htm>.

¹⁵ Bates Gill, նշվ. աշխ.:

¹⁶ Sharif Shuja, Warming Sino-Iranian Relations: Will China Trade Nuclear Technology For Oil?, China Brief, A Journal of Analyses and Information, The Jamestown Foundation, Vol. V, Issue 12, 24.05.2005, p.9.

¹⁷ FBIS-NES-91-214, 5.11.1991, p. 80.

¹⁸ John Calabrese, Iran's Nuclear Program and the IAEA Compromise: A Bridge to a Better Bargain? The Middle East Institute, 15.12.2003.

http://www.parstimes.com/news/archive/2003/iran_nuclear_compromise.html

¹⁹ Bates Gill, նշվ. աշխ.:

²⁰ China's Nuclear Exports and Assistance to Iran, նշվ. աշխ.:

²¹ John Calabrese, China and Iran, Mismatched Partners, The Jamestown Foundation, Washington, DC, August 2006, p. 9. ՉԺՀ-ի մասակարարում էր Իրանն ներկրվող զենքի 18%-ը:

²² China Backs off from Iran, նշվ. աշխ.:

²³ China's Nuclear Exports and Assistance to Iran, նշվ. աշխ.; Ji Hye Shin and John J. Tkacik, Jr., China and the Middle East: A New Patron of Regional Instability, The Heritage Foundation Leadership For America, 26.09.2006; Shirley Kan, China and Proliferation of Weapons of Mass Destruction and Missiles: Policy Issues, Congressional Research Service Report for Congress, 22.07.2003, p. 7. 1997թ. հոկտեմբերի 29-ի մամլո համառոտ ատուխում ԱՄՆ-ի ազգային անվտանգության խորհրդական Սենդի Բեթգերը Խայտարայեց, որ Սենթ ստուցել ենք Չինաստանի հավաստիացումները՝ Իրանի հետ միջուկային համագործակցությունը չշարունակելու և առկա համագործակցությունը դադարեցնելու ուղղությամբ»:

²⁴ China's Nuclear Exports and Assistance to Iran, նշվ. աշխ.:

²⁵ Liu Qing, նշվ. աշխ., էջ 127:

²⁶ Хуман Пеймани, Расширение двусторонних отношений между Китаем и Ираном приносит этим странам экономические и геополитические выгоды, EURASIANET, 23.2.2009. <http://www.eurasianet.org/russian/departments/insight/articles/eav053003.ru.sht.ml>.

²⁷ http://www.dumaem.ru/print.php?st_id=230.

²⁸ М.Задонский, Современное состояние ирано-китайских отношений, Сборник "Ближний Восток и современность", М., 2003, стр. 245, 2002 р. ապրիլին ՉԺՀ նախագահ Չան Չեյինը պետական այցելով Եղալ Էլիթիայում, Թունիսում, Նիգերիայում, և Իրանում: Այս մասին տե՛ս Կրիտ 2004, Пекин, 2003, стр. 98-99.

²⁹ Хуман Пеймани, նշվ. աշխ.:

³⁰ <http://www.iimes.ru/rus/stat/2003/20-11-03.htm>.

³¹ Central Intelligence Agency, Unclassified Report to Congress on the Acquisition of Technology Relating to Weapons of Mass Destruction and Advanced Conventional Munitions, 1 January Through 30 June 2002. http://www.cia.gov/cia/reports/721_reports/jan_jun2002.html.

³² Ji Hye Shin and John J. Tkacik, Jr., նշվ. աշխ.:

³³ Alissa Rubin and John Daniszewski, U.N Panel Puts Iran on Notice, Los Angeles Times, 5.02.2006, p. A1.

³⁴ Sharif Shuja, նշվ. աշխ., էջ 9:

³⁵ Beijing Review, 21.10.2004.

³⁶ Sharif Shuja, նշվ. աշխ., էջ 9; Xia Liping, International Terrorism and Anti-Terror War: Chinese Perspective, International Review, SIRS, Vol. 38, Spring 2005, p. 68.

³⁷ Beijing Review, 30.12.2004.

³⁸ Xia Liping, նշվ. աշխ., էջ 68:

³⁹ Alissa Rubin and John Daniszewski, նշվ. աշխ., էջ A1:

⁴⁰ John Calabrese, China and Iran, Mismatched Partners, նշվ. աշխ., էջ 10:

⁴¹ Financial Times, 17.01.2006.

⁴² Neil Buckley, Richard McGregor, Russia and China Caught on the Iranian Issue, The Financial Times, 16.1.2006;

<http://www.inosmi.ru/transation/224844.html>.

⁴³ China joins Russia in Iran Diplomacy, China Daily, 24.02.2006; Alissa Rubin and John Daniszewski, նշվ. աշխ., էջ A1:

⁴⁴ John Calabrese, China and Iran, Mismatched Partners, նշվ. աշխ., էջ 10-11:

Պեկինը հուսով էր, որ Թեհրանին ցուցաբերած աջակցությունը չի վնասում իր հեղինակությունն Իրանի հարևան արսբական երկրների շրջանում, որոնց հետ փոխահավետ հարաբերություններ ուներ: Այդ նպատակով 2006թ. մայիսին Չինաստան-արաբական երկրներ համագործակցության համաժողովին հանդես եկավ միջուկային զենքից ազատ ՌՍ-ի պաշտպանությանը:

⁴⁵ Совет Безопасности, Организация Объединенных Наций, S/RES/1696 (2006), Резолюция 1696 (2006), 5500 заседание, 31 июля 2006г.

<http://www.un.org/russian/document/sresol/res2006/res1696.htm>.

⁴⁶ Ji Hye Shin and John J. Tkacik, Jr., նշվ. աշխ.:

⁴⁷ <http://zhamanak.com/article/2681/>; <http://zhamanak.com/article/2765/>.

⁴⁸ <http://www2.tribe.it/worldservice/armenianradio/Arshiv/Khabar/11-2007/27.htm>.

⁴⁹ <http://www.newsru.com/arch/finance/11jan2007/pars.html>.

⁵⁰ Վառելիքային կախվածությունը ՉժՀ-ին ստիպում է հատուկ հարաբերություններ հաստատել ՄԱ-ի և Պարսից ծոցի երկրների՝ ներառյալ ԱՄՆ-ի հետ բնամական հարաբերություններ ունեցող և ահաբեկչությունը խթանող երկրների հետ: 2005թ. ԱՄՆ-ի պատժամիջոցներ է կիրառել ՉժՀ-ի նկատմամբ՝ միջազգային ահաբեկչությանը հովանավորող պետությունների կողմից հրթիռային և զանգվածային ուժեղացման զենքի ստեղծման ծրագրերին աջակցության մեղադրանքով:

⁵¹ Салиев А.Л. Ядерная программа Ирана: история и основные этапы развития, АНАЛИТИКА, Иран, 28.05.2007.

⁵² Liu Qing, նշվ. աշխ., էջ 128-129:

⁵³ П.С.Большакова, Отношение Ирана с Европой как фактор укрепления региональных позиций, Роль и место Ирана в регионе, Коллективная монография, Москва, 2007, стр. 64.

⁵⁴ Neil Buckley, Richard McGregor, նշվ. աշխ.:

<http://www.eurasianet.org/russian/departments/insight/articles/eav053003ru.-shntml>. Իրանը երկրորդ տեղն էր զբաղում ՉժՀ-ին նավթ մատակարարող երկրների թվում (ՉժՀ ներմուծվող նավթի 10.8%-ը), Սաուդյան Արաբիայից (14%) և Օմանից (13.3%) հետո: 2006 թվից Իրանը դարձավ ՉժՀ-ին նավթ մատակարարող առաջին երկիրը՝ գրավելով Սաուդյան Արաբիայի տեղը: 2004թ. Չինաստանն Իրանի հետ 25 տարով (2008 թվից սկսած) 100 մլրդ. ԱՄՆ դոլարի բնական գազի գնման գործարք էր կնքել:

⁵⁵ Իրանն էլ հենվելով իր վառելիքային հսկայական պաշարների վրա, իր կապերն ամրապնդում է Չինաստանի և Հնդկաստանի հետ՝ վերջիններիս համար բարենպաստ մերդրումային դաշտ ապահովելով իրանական էներգետիկ սեկտորում:

⁵⁶ А.И.Полищук, Российско-иранское сотрудничество по реализации Международного транспортного коридора (МТК) “Север-Юг”, Роль и место Ирана в регионе, Коллективная монография, Москва, 2007, стр. 161. «Հյուսիս-Հարավ» միջանցքի ստեղծման գաղափարն առաջ է քաշվել 1993թ. Հելսինկիում՝ Հյուսիսային Եվրոպայի, Սկանդինավների և Ռուսաստանի տրանզիտային կայր Պարսից ծոցի, Հնդկական օվկիանոսի և Հարավ-Արևելյան Ասիայի երկրների հետ Իրանի միջոցով ապահովելու նպատակով: 2002թ. ապրիլին Չինան Չեմինի բեիրանյան այցելության ընթացքում իրանական մեկնարանները «Հյուսիս-Հարավ» միջանցքի հաս-

տատունը չին-իրանական հերթերություններում բարձրագույն առաջնա-երրորդում էին համարում: Ենթադրվում էր, որ միջանցքը կարող էր ծառայել ոչ միայն իրրե տարածաշրջանի տնտեսության զարգացման գրավական, այլ ԱՄՆ-ի միակողմանիությանը հակադրող դիվանագիտական լծակ:

⁵⁷ Н. М. Мамедова, Иран и ШОС (Шанхайская Организация Сотрудничества), Роль и место Ирана в регионе, Коллективная монография, Москва, 2007, стр. 70.

⁵⁸ Sharif Shuja, նշվ. աշխ., էջ 10:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՉՐՆ-ՄԱՌԴՅԱՆ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

1960-1970-ականներին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) արտաքին քաղաքականության մեջ գերակշռում էր քաղաքական գաղափարախոսությունը: ԱՄՆ-ԽՍՀՄ առնակատման և «սուր պատերազմի» պայմաններում Պեկինը փորձում էր դառնալ «երրորդ աշխարհի» առաջատար ուժ՝ Մերձավոր Արևելքի (ՄԱ) երկրների հետ հարաբերություններում կարևորելով հակա-գաղութային պայքարին ցուցաբերվող աջակցությունը:

Սակայն 1978թ. ՉԺՀ-ի կոմունիստական կուսակցության կենտրոնի պատմական նախադրանքի ի վեր Չինաստանը ձեռնամուխ եղավ ներքին բարեփոխումների, իսկ 1992-ից՝ արտաքին քաղաքականության իրականացման գործին¹: Պեկինը փոխեց Մաոյի «քաղաքական հրամայական» կարգախոսը «ունեռանկան հրամայական»-ով²: Այս մոտեցումը հանգեցրեց ՄԱ-ի բոլոր երկրների հետ Պեկինի հարաբերությունների ամրապնդմանն ու տարածաշրջանում ՉԺՀ-ի ազդեցության զգալի աճին: ՄԱ-ի երկրների հետ հարաբերությունների ամրապնդման նպատակով ՉԺՀ-ը 1978թ. դիվանագիտական հարաբերություններն ստատուեց Օմանի, Հորդանանի և Լիբիայի հետ³, սակայն նրան չհաջողվեց ճանաչման հասնել Սաուդյան Արաբիայի կողմից: Մինչդեռ Ռիչարդ տոնե-սական և ռազմավարական տեսանկյունից համարվում էր տարածաշրջանի առաջատարը, որի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը կարող էր հանգեցնել նաև Բահեյնի, Կատարի, Արաբական Միացյալ Էմիրությունների՝ ԱՄԷ-ի հետ դիվանագիտական ներկայացուցչությունների փոխանակմանը⁴: Խոնդին այն է, որ Սաուդյան Արաբիան ՉԺՀ-ի նկատմամբ միատարաբարությունը տալիս էր Թայվանի հետ դիվանագիտական և առևտրային սերտ հարաբերություններին՝ միաժամանակ բավարարելով վերջինիս նավթային պահանջարկի մեծ մասը⁵: Նշենք, որ Պեկինի հետ հարաբերությունների հաստատումից խուսափումը պայմանավորված էր նաև այն խոր անվտանգությանը, որ սաուդյան քաղաքական տունը տաժում էր կոմունիզմի նկատմամբ⁶:

1980-ականների կեսերին իր տնտեսության արդիականացման գործի նյութառնիակական ազատվման նպատակով Չինաստանը սկսեց անհամադրելի չափերով զենք արտահանել ՄԱ-ի երկրներ, վերջիններիս համար զենքի այլընտրանքային աղբյուր ծառայելով⁷: Մինչ այդ ՄԱ-ի զենքի շուկան Պեկինի համար փակ էր ոչ միայն տարածաշրջանի երկրների հետ իր սահմանափակ դիվանագիտական կապերի, այլ «սառը պատերազմի» կարգավիճակում գտնվող գերտերությունների՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի, ինչպես նաև նրանց յուշակիցների կողմից ատակել կատարելակցված զենքերի առաքումներով զրադեզված լինելու պատճառով: Նշենք, որ ՉԺՀ-ի ՄԱ-ի պատվիրատուները հիմնականում այն երկրներն էին, որոնց չէր հաջողվում բալիստիկ հրթիռներ և ռազմական որոշ տեխնոլոգիաներ ձեռք բերել ԱՄՆ-ից⁸: Կոնկրետ դեպքում 1985թ. հրեական յուրի ճնշման առկա Ռեյզանը իրաժամելից Սաուդյան Արաբիայի և Հորդանանին «Մոխրեցրեց» տիպի հրթիռներ վաճառել, իսկ 1986թ. վետո դրեց Սաուդյան Արաբիային 354 մլն ԱՄՆ դոլարի զենքի վաճառքի վերաբերյալ կոնգրեսի որոշման վրա: 1987թ. մերժվեց նաև 1.4 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ զենքի ("F-15" տիպի 12 ինքնաթիռ, 1600 «Ֆալկոն» տիպի հակառակակային հրթիռ և "M-60" տիպի տանկ) գնման Ռիչարդ ինդոնեզիլը⁹: Վերջինս ստիպված էր տարածաշրջանային մրցակիցների՝ Իրանի, Իսրայի և Իսրայելի գինանցում առկա բալիստիկ հրթիռների նկատմամբ հակակշիռ ապահովելու նպատակով, գաղտնի դիմելու Պեկինի օգնությանը՝ միաժամանակ հիմք դնելով երկու երկրների միջև համագործակցության հաստատմանը: 1985թ. հուլիսին Սաուդյան Արաբիան «CSS-2» տիպի (3000 կմ շառավղով՝ "East Wind") 34 քալիստիկ հրթիռ և 9 հրթիռային գնեց ՉԺՀ-ից¹⁰, որի մասին վաշինգտոնը տեղեկացավ միայն 1988թ.: Փաստենք, որ սաուդյանները, չինացիների կողմից չներսկվեցին հրթիռների տեղակայման և տեսնիկական բնույթի հետ կապված ստորագոյցիչ սահմանափակումների, ինչպես արվում էր ԱՄՆ-ի դեպքում¹¹:

ԱՄՆ-ի պետքարտուղարի օգնական Ռիչարդ Կարթի համաձայն՝ 1989թ. դրությամբ ՉԺՀ-ից ձեռքբերված հրթիռները դեռևս մարտական չէին¹²: Այնուհանդերձ, գործարքը ստատոգություն առաջացրեց ԱՄՆ-ի և Իսրայելի մտտ: Թե-Ալիվի անգամ հայտարարեց, որ պատրաստ է օչնչացնել զենքը հրթիռները օդային հարվածներով: Վաշինգտոնը շտապեց քանակություններ վարել Պեկինի և Ռիչարդի հետ, որի ընթացքում

վերջինս հավատախաբեցրեց, որ հրքիռները գործնականում ուղղված են ոչ քե Իսրայելի, այլ Իրանի դեմ, ընդ որում՝ պաշտպանական նկատառումներով: Իր հերքին Պեկինն ԱՄՆ-ին վստահեցրեց, որ Մատույան Արաբիային տրամադրված հրքիռները չունեն միջուկային մարտազվեսիկներ, հետևաբար Իսրայելի անվտանգությանը սպառնալիք ներկայացնել չեն կարող¹³: 1989թ. դեկտեմբերի 31-ի կառավարության նիստի իր ելույթում սատույան բազավոր Ֆահդը հայտարարեց, որ Ռ-իլադի տրամադրության տակ միջուկային մարտազվեսիկներ չկան¹⁴: Իրականում գործարքն օգտակար գտնվեց Պեկինի համար, քանի որ այն ոչ միայն ֆինանսական շահույթ էր ապահովում երկրին, այլ ի հեճուկս Թայվանի, Ռ-իլադի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման նախադրյալ ծառայում:

1991թ. սատույան բազավորական ընտանիքը՝ Իրաքի քուվեյթյան ներխուժման դատք փորձից ելնելով, որի ընթացքում հայտնվել էր ԱՄՆ-ից ռազմական կախվածության ոչ նախամեկի իրավիճակում, Չինաստանին սկսեց դիմել իբրև իր ռազմական ձեռքբերումների տարրորշման աղբյուրի¹⁵: 1991թ. Պեկինը “CSS-2” տիպի հրքիռների կենտրոնական մարտազվեսիկների կատարելագործման ուղղությամբ օգնություն ցուցաբերեց Մատույան Արաբիային: Ավելին, հակառակ Մատույան Արաբիային շինական զենքի վաճառքի խոչընդոտման ուղղությամբ ԱՄՆ-ի և եվրոպական երկրների գործարքում ջանքերին, 2000թ. Պեկինը, Ռ-իլադի խնդրանքով, շարունակեց ռուսումնալարծանքներ անցկացնել սատույան զինվորական անձնակազմի հետ¹⁶:

1988 թվից ի վեր բացակայում են երկու պետությունների մեծ քանակությամբ տվորական սպառազվեություն գործարքի մասին արժանահավատ տեղեկությունները: Մինչդեռ ժամանակ, չի բացառվում, որ սատույան ղեկավարությունը փորձել է Իրանի ռազմական առավելության սահմանափակման նպատակով հրքիռներ և այլ զենքեր կամ տեխնոլոգիաներ ձեռք բերել Պեկինից¹⁷:

Մատույանիական հարաբերությունները, այնուամենայնիվ, չսահմանափակվեցին ռազմական համագործակցությամբ: 1988թ. նոյեմբերի 11-ին Ռ-իլադի ու Պեկինը «փոխընդրման հուշագիր» ստորագրեցին երկու երկրներում առևտրային ներկայացուցչությունների քաջան վերաբերյալ: Եվ վերջապես, 1990թ. հուլիսի 21-ին Ռ-իլադի ու Պեկինը հուշագիր

ստորագրեցին՝ հայտարարելով երկու երկրների միջև դիվանագիտական յիարժեք հարաբերությունների հաստատման մասին: 1997թ. հոկտեմբերին ինժնեադրվեց չին-սատույան բարեկամական ընկերակցությունը¹⁸: Հանախակի քնույր սկսեցին կրել կառավարական բարձրատիճան պատվի-թակությունների և գործարար շրջանակների փոխայցելությունները¹⁹: Ուշագրավն այն է, որ Պեկինի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո Մատույան Արաբիան սահմանափակեց իր կապերը Թայվանի հետ²⁰:

Հարկ է նշել, որ Ռ-իլադը՝ պահպանելով հանդերձ իր ավանդական աներկիվանտ կողմնորոշումը, որի կենսական նշանակությունը բազավորության համար առավել ակնհայտ դարձավ 1990-1991թթ. քուվեյթյան ճգնաժամի ընթացքում, համաշխարհային տնտեսության և քաղաքականության «ուժի այլ կենտրոններին» ուղղությամբ վերակողմնորոշվելու միտումներ ցուցաբերեց: Հաշվի առնելով ՉԺՀ-ի աճող ազդեցությունը տարածաշրջանային և համաշխարհային գործընթացներում, Ռ-իլադն աշխուժագրեց իր առիական քաղաքականությունը²¹:

Ինչ վերաբերվում է Պեկինին, սպա վերջինս 1991թ. ԽՍՀՄ-ի փլուզումից և Զուվեյթի պատերազմից հետո ոչ միայն անբապնդեց ՄԱՆ-ում իր դիրքերը, այլ 1993 թվից ի վեր նավի ներկրողի կարգավիճակի անցնելով՝ ՄԱՆ-ի նավթարդյունահանող երկրների հետ հարաբերությունների զարգացումը համարեց դիվանագիտական առաջնահերթությունը²²: Իրերի նավթային պահանջարկի շարունակվող աճի պայմաններում Պեկինը՝ 1990-ականների երկրորդ կեսից ՄԱՆ-ի նավթարդյունահանող երկրների շարքում կարևորելով Մատույան Արաբիայի *յուրահատուկ տիրապետող* դիրքերը²³, 1990-ականների վերջերին մեծ ջանքեր գործադրեց Ռ-իլադի հետ կապերի անբապնդման և խորացման ուղղությամբ²⁴:

1998թ. Մատույան Արաբիայի գահաժառանգ արքայազն Աբդուլաի իրն Աբդ ալ-Ազիզն այցելեց ՉԺՀ, որի շրջանակներում 1.5 մրդ ԱՄՆ դոլարի չին-սատույան նավթավերամշակող հսկա գործարանի համատեղ կառուցման և տարեկան 10 մլն տոննա սատույան նավթ ՉԺՀ արտահանելու վերաբերյալ (50 տարով) գործարք կնքվեց²⁵: Այս այցելությունը վկայում էր *աշխարհի նավթային պահանջարկ տնցող խոշորագույն երկրներից մեկի* ՉԺՀ-ի և *աշխարհի մեծագույն նավթարդյունահանող երկրներից մեկի* Մատույան Արաբիայի միջև յուրահատուկ հարաբերու-

յունների ձևավորման մասին: Նշենք, որ Չինաստան սատոյան նավթադաբումների աճի արդյունքում նվազեց սատոյան նավթի արտահանումն ԱՄՆ²⁶:

Ռիչարդի հետ ռազմավարական հարաբերություններ զարգացնելու Պեկինի ջանքերը նոր փուլ մտան 1999թ. սեպտեմբերին ՉժՀ-ի նախագահ Չիան Չեմինի՝ Սատոյան Արաբիա կատարած այցից հետո, որի շրջանակներում նավթային համագործակցության վերաբերյալ երկու երկրների առաջնորդների ստորագրած պայմանագրով ամրագրվեց նրանց միջև հաստատված «նավթային ռազմավարական համագործակցությունը»²⁷: Պայմանագրով ՉժՀ-ը պարտավորվում էր իր նավթազեղման սեկտոր բացել Սատոյան Ազգային նավթային ընկերության՝ Արամեթիկյան նավթային ընկերության (ARAMCO-ԱՐԱՄԿՈ) համար: Իր հերթին Սատոյան Արաբիան պարտավորվում էր սեփական նավթային և գազային շահագործման սեկտոր բացել չինական ներդրումների համար²⁸:

Հարկ է նշել, որ 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունից հետո լարվածություն նկատվեց սատոյանների կան հարաբերություններում՝ հատկապես ահաբեկիչների մեծ մասի սառույցի վիճելու հանգամանքով պայմանավորված²⁹: Սատոյան Արաբիայում ԱՄՆ-ի վարչակազմի, նրա վարած քաղաքականության և արժեքների նկատմամբ ոչ բարյալակամ մեմոարտի սաստիկացմանը³⁰ նպաստեց ԱՄՆ-ի կողմից ահաբեկչությունն իրամի հետ կապելու և Վաշինգտոնի սանձազերծած «հակաահաբեկչական պատերազմում» «խթանական սպառնալիքի» հստակապի շահարկման փաստը³¹: Ուտոի պատահական չնք համարում, որ 2001թ. նավթի ռեկորդային շահագործման արդյունքում սատոյան թագավորությունում կուտակված հսկայական հեղուկի արտահանումն ապահովելու նպատակով Ռիչարդն իր հայացքն ուղղեց դեպի Չինաստան³²: 2001թ. ՉժՀ-ը թագավորությունից ներկրեց 2 մլրդ ԱՄՆ դոլարի նավթ, որն անհամեմատ բարձր ցուցանիշ էր 2000թ. 1,55 մլրդ դոլարի համեմատությամբ³³: Գեո ալեյին, 2001թ. վերջին Սատոյան Արաբիայի առաջատար նավթային մատակարարը՝ ԱՐԱՄԿՈ-ն, ամբիկյան Exxon Mobil-ը և Չինաստանի Չուչիան մահանգի նավթաքիմիական ընկերությունը պայմանագիր կնքեցին ճշյալ մահանգի նավթազեղման գործարանի արդյակաբանման և տեխնիկա-տնտեսական վերազինման վերաբերյալ³⁴:

ՉժՀ-ի և Սատոյան Արաբիայի միջև տնտեսական համագործակցության ընդլայնմանը նպաստեց նաև 2003թ. մարտին ԱՄՆ-ի իրաքյան ներխուժումը, որն առավել խորացրեց ԱՄՆ-ի և արաբական երկրների միջև հակասությունները³⁵: իսլամական աշխարհում ԱՄՆ-ի հեղինակությունը վտանգման³⁶: Իրաքում ԱՄՆ-ի զորքերի հաղթանակի և տարածաշրջանում Վաշինգտոնի տիրապետության արագ աճի պայմաններում վերջինիս տոտալ վերահսկողության տակ հայտնվելու մտավախությունից ելնելով, Շոցի որոշ երկրներ, մասնավորապես Սատոյան Արաբիան, խստորին դատապարտեցին ԱՄՆ-ի իրաքյան ներխուժումը՝ պահանջելով իրենց տարածքներից դուրս բերել ամերիկյան զորքերը: ԱՄՆ-ի վրեժխնդրությունից խուսափելու, ինչպես նաև տարածաշրջանում վերջինիս նկատմամբ հակահիշո ստեղծելու նպատակով Շոցի Համագործակցության Խորհրդի երկրներն իրենց համեմատաբար փակ և մեղանշողիաչին նավթային հետախուզման ու շահագործման շուկան բացեցին նոր դեմակատարների համար³⁷: 2004թ. սկզբին Սատոյան Արաբիան օտարերկրյա ընկերություններին բույլատրեց հետախուզել թագավորության հարուստ էներգետիկ պաշարները³⁸: Բնական գազի շահագործման վերաբերյալ պայմանագիր ստորագրվեց Չինաստանի ազգային նավթաքիմիական ընկերության (SINOPEC-ՉԱՆՔԿ) հետ: Պայմանագիր կնքվեց նաև ԱՐԱՄԿՈ-ի հետ՝ Սատոյան Արաբիայի հարավային Ռուր ալ-Ֆուկի նոսահգի Վալվար բնական գազադրոշի շահագործման նախագծի վերաբերյալ, որի սկզբնական փուլի համար նախատեսված ծախսերը կազմեցին 300 մլն ԱՄՆ դոլար³⁹:

Իր հերթին, ԱՐԱՄԿՈ-ն ՉԱՆՔԿ-ի և Exxon Mobil-ի հետ համագործակցության շրջանակներում, 2005թ. հուլիսին 3.5 մլրդ ԱՄՆ դոլարի ներդրում իրականացրեց ՉժՀ-ի արևելյան Չուչիան մահանգի (Գուանցո քաղաք) նավթազեղման գործի ընդլայնման նախագծում՝ գործարանին հնարավորություն ընձեռելով մշակելու սատոյան բարձրժմծային կոշտ նավթը: ԱՐԱՄԿՈ-ն ՉԱՆՔԿ-ի հետ Շանցոնում (Յինցոսայում) կառուցեց մեկ այլ՝ 1.2 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ նավթազեղման գործարան⁴¹:

2006թ. հունվարի 22-24-ին սատոյան թագավոր Աբդուլախ իբն Աբդու Ազիզ ալ-Սաուդն իր ասիական շրջագայության շրջանակներում, երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր առաջին անգամ, այցելեց ՉժՀ⁴²: Այցի ընթացքում երկու

կողմերը ստորագրեցին էներգիայի, առևտրային և օգտակար համաձուների դեպոզիտների զբոստում ներդրումների լայն շրջանակ ընդգրկող պայմանագիր, չբացահայտելով գործարքի մտքամասները: Մի շարք այլ պայմանագրեր կնքվեցին տեխնիկատնտեսական համագործակցության, երկակի հարկումից խուսափելու, որակավորման դասընթացների շուրջ համագործակցության և Սաուդյան Ջարգացման բանկի կողմից չինական հեռավոր արևմտյան Աբու Զալաբի գաղազման ծրագրերի իրականացման նպատակով փոխառություն տրամադրելու վերաբերյալ⁴³: Այցի ընթացքում չինական կողմն առաջարկեց Սաուդյան Արաբիայի «CSC-2» տիպի հենցած հրքիռները փոխարինել չինական ժամանակակից հրքիռներով, որն արևմտյան լրատվամիջոցներում Թալվանին ամբիկյան ռազմական օգնության դիմաց հակակշիռ ապահովելուն ուղղված քայլ գնահատվեց⁴⁴:

Ոչ ազգային այն է, որ նշյալ այցելությունը տեղի էր ունենում միաժամանակ չին-ամերիկյան և սաուդա-ամերիկյան հարաբերությունների լարվածության շրջանում: Հետևաբար չի բացառվում, որ երկու երկրներն էլ պայմանագրին վերաբերվում էին իբրև ռազմավարական նոր հարաբերությունների և էներգետիկ կարևոր համագործակցության «ուղեկիշի»⁴⁵: Որոշ փորձագետներ գործարքը դիտում էին անգամ իբրև ԱՄՆ-ի շահերին նետված մարտահրավեր, քանզի ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ՄԱ-ում, հատկապես Շոցի երկրներում ԾժՀ-ի ազդեցության աճն իբրև նոր մրցակցի, չէր կարող չնտանդել ԱՄՆ-ին⁴⁶:

Այդ էր բերևս պատճառ, որ թագավորի այցելությունը գնահատվեց իբրև էներգետիկ համագործակցությունից բավական հեռու գնացող ոչ պաշտոնական «դաշինքին» ուղղված նախնական քայլ, որն օրինակաճանցում էր միարևելա միջազգային համակարգում «Պեկինի» իբրև նոր «բևեռի», ինչպես նաև այլընտրանքի կամ փոխարինողի կարգավիճակը: Իսկ դա նշանակում էր, որ «Պեկինից բնական կախվածության մեջ կարող էին հայտնվել ինչպես Սաուդյան Արաբիան, այնպես էլ «երրորդ աշխարհի» մյուս երկրները, քանի որ, ի տարբերություն Մաոյի «հեղափոխական» մտղի, հետ-մատական «էվոլյուցիոն» մոդելը՝ իր կապիտալիստական տնտեսությամբ աստիճանաբար գրավում էր զարգացող երկրներին⁴⁷:

Գործարքի կերմից ընդամենը մի քանի ամիս անց, 2006թ. ապրիլի 22-ին, ԾժՀ-ի նախագահ Հու Չինբաոն փոխադարձ այցով ժամանեց

Սաուդյան Արաբիա, որի ընթացքում մի շարք այլ թվում էներգիայի աղբյուրների շահագործման և անվտանգության վերաբերյալ պայմանագրեր ստորագրվեցին⁴⁸:

2007թ. մարտին Սաուդյան ԱՐԱՄԿ-ն, ՉԱՆԶԿ-ը և Exxon Mobil-ը համաձայնության եկան չինական նախագաման գործարանի կիմնադրման գործում ԱՐԱՄԿ-ի և Exxon-ի կողմից աջակցություն ապահովող գործարքի շուրջ, որի դիմաց Exxon-ը՝ Չինաստանում 750 գազային կայանների գործարկման, իսկ սաուդյանները՝ արտահանման իրավունք էին ստանում: Աշխատանքային համաձայնագրի առանձին մասով Չինական այլոմինի կորպորացիան (ChinaCo-ՉԱԿ) պատրաստվում էր Սաուդյան Արաբիայի հյուսիսում ՖուՖատի շահագործման հետ կապված նախագիծ իրականացնել և թագավորություն Ջազան տնտեսական քաղաքում արտադրական սարքավորումների գործարան կիմնել⁴⁹:

Հարկ ենք համարում նշել, որ «Պեկինը Սաուդյան Արաբիայի հետ համագործակցում է նաև ՕՊԵԿ-ի»⁵⁰, «Գարսից Շոցի արաբական երկրների համագործակցության խորհրդի (GCC)»⁵¹ և Չինաստան-արաբական երկրներ համաժողովի շրջանակներում, որի պեկինյան 2006թ. համաժողովի ընթացքում չին դեկավարությունն արաբական երկրներին առաջարկեց ԾժՀ-ի հետ հաստատել «նոր տիպի» հարաբերություններ⁵²:

Անշուշտ Վաշինգտոնին չեն կարող չնտանդել ՄԱ-ում ԾժՀ-ի ամրապնդման փորձերը, որն ընդաչանում է իր հայաբերությունն ունեցող տարածաշրջանի արժատական վարչախմբերի (Սիրիա, Սուդան, Լիբիա, Իրաք, Իրան) հետ, որոնց հետ ԱՄՆ-ը բարդ հարաբերություններ ունի: «Վաշինգտոնում մեծ խանդավառություն չի առաջացնում նաև ՄԱ-ում ԱՄՆ-ի ավանդական գործընկերների» արաբական չափավոր վարչախմբեր Սաուդյան Արաբիայի, Զուվեյթի, ԱՄԷ-ի, Օմանի և այլ երկրների հետ ԾժՀ-ի համագործակցության ընդլայնումը⁵³:

GCC and China have also led to closer relations in the security fields. In this context, Chinese criticism of the US' anti-terror campaign and democracy plans for the region are in sync with the governments of the GCC countries.

But experts warn that China must be very cautious if it wants to avoid strong resistance from the United States and its allies about the negotiation and implementation of the FTA deal. Some experts also fear China's relationship with its energy providers could undermine political reforms in the GCC. The others fear an influx of Chinese oil money could effectively shelter GCC states from U.S. or European political pressures, muting hopes for political reform in those countries. Experts also warn that China's development caused the oil price rising, resource scrambling, environmental pollution and global warming, China has being reproached for 'working to expand a sphere of political influence and developing exclusionary policies towards other powers; actively resisting international democratic change and encouraging particularly friendly ties with autocratic regimes responsible for flagrant human-right violations.

Beijing counters that the sustainable development of energies in China is helpful to maintain world energy security and China's steady growth of energy demand will not only create favorable conditions for the development of domestic energy industry, but also help improve the international allocation of energy resources and promote the prosperity and stability of the international energy market. It is believed in Beijing that efforts should be made to maintain a sound political climate favorable to energy security and stability. China has not posed any threat to the international community, because it has been both a large energy consumer and a large energy producer, with its annual production ranking second in the world and with its domestic energy resources a self-sufficiency rate of above 90 percent.

Beijing counters that it remains committed to a peaceful rise philosophy aimed at embracing economic globalization and improving relations with other countries. In taking an active part in economic globalization and world trade markets, China aims at a win-win situation and common prosperity based on justice instead of seeking unilateral interests.

China's development benefits from the peace of the international system and China's rise depends on the peaceful shift of the power structure of the international system. Neither plundering the resources and wealth of other countries nor forcing to occupy markets of others China will mainly depend on self-reliance and its own efforts to develop. China should actively participate, moderate and improve the present international order, political and economic, rather than transform and reconstruct the system. All countries should join hands to safeguard the stability in energy-producing countries and regions, the ME and the Gulf area in particular, and to ensure security of the international energy pathways. Differences and problems should be resolved through dialogue and consultation. Energy issues should not be politicized. In any case, increasing dependency on GCC states from oil exports could mean that Chinese political and economic stability would become dependent on the political and economic stability in the GCC.

ՄԱՆԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹Չորսմը հիմնարկվել է 2004թ. հունվարին, որի նախարարական առաջին համաժողովը տեղի է ունեցել 2004թ. սեպտեմբերին Արաբական պետու-

յունների լիզայի Կահիրեի շտաբակայանում: Հանդիպման ժամանակ եու-
չազիր ստորագրվեց և գործադրությունների ծրագիր ընդունվեց: Այս մասին
տե՛ս Yao Kuangyi, Arab Countries; Reform and Development of China-Arab
Relations, International Studies, Beijing, Winter 2005, p. 103; Ma Zhengang,
The Increasingly Eminent “China Factor” in the World Pattern, International
Studies, CIIS, Vol. 3, May 2005, p. 6.

²Chietigj Bajraace, China Becomes Increasingly Involved in the Middle East,
Power and Interest News Report, 10.3.2006.

<http://www.pinr.com/report.php?acc=viewreport&reportid=455&languageid=1>.

³B.V.Машин, А.И.Яковлев, Персидский Залив в планах и политике Запада,
Москва, 1985, стр. 111.

⁴<http://www.globalsecurity.org/military/world/gulf/gcc.htm>.

Այդ մարտահրավերների թվում էր 1980-88թթ. իրան-իրաքյան պատերազմը:

⁵B.V.Машин, А.И.Яковлев, նշվ. աշխ., էջ 111: Հարավ-արևմուտքում՝
Երովսիան, հարավում՝ մարքսիստական Յեմենը, կուսխում՝ նոր
ձախակն կառավարությամբ Աֆղանստանը, իսկ Մոնղի հանդիպակց
ափին՝ իսրամական ֆունդամենտալիզմ ոգոշնչող Իրանը:

⁶The Time, 15.01.1979.

⁷B. B. Машин, А. И. Яковлев, նշվ. աշխ., էջ 112: ԱՄՆ-ի ձեռքում
շախմատային զինվորներ ծառայելու առնչությամբ արմատականների
մեղադրանքներից խուսափելու նպատակով սատոյան կառավարիչները
փորձում էին դիմակայել իրենց տարածքում ԱՄՆ-ի ռազմահանգրվաններ
տեղակայելու հնարավորությանը:

⁸Նույն տեղում, էջ 115:

⁹<http://www.globalsecurity.org/military/world/gulf/gcc.htm>. Մակայն ՄՀԽ-ի
երկրներին չհաջողվեց ընդլայնել իրենց ուժերը, իսկ 1991թ. Օսանի
առաջարկը 100.000-անոց համատեղ ռազմական մարմին ստեղծելու
ուղղությամբ ընդունվեց:

¹⁰Profile: Gulf Co-operation Council, BBC News, UK, 17.9.2008.
<http://news.bbc.co.uk/1/hi/world/middleeast/countryprofiles/4155001.stm>.

Տարածայնություններ կային ԱՄՆ-ի իրաքյան ներխուժման հարցում, որին
ՄՀԽ-ի որոշ երկրներ դեմ էին, ոմանք՝ կողմ, օրինակ՝ Քուվեյթը, սրը
ռազմաբաշտի համար ցատկահարթակ ծառայեց: 2008թ. լրվածություն
առաջադավ Իրանի առնչությամբ, երբ հատկապես ԱՄՆ-ի պետքա-

տուղար Քոնդոլիզա Ռայսը Խորհրդի հանդիպման ժամանակ ճնշում
գործադրեց Իրանի միջուկային ծրագրի պաշտպանության դեմ:

¹¹<http://www.fmprc.gov.cn/eng/wjwb/zjzj/gjs/gjzzyhy/2616/t15334.htm>.

¹²<http://www.globalsecurity.org/military/world/gulf/gcc.htm>.

¹³<http://www.arab.de/arabinfo/gcc.htm>. ՄՀԽ-ի կենտրոնակայանը գտնվում է
Ռիյադում: ՄՀԽ-ը 1982թ. նոյեմբերին հիմնադրել է Մոնղի Ստանդարտների
կազմակերպությունը, իսկ 1984թ.՝ Մոնղի Ներդրումների կորպորացիան:

¹⁴Profile: Gulf Co-operation Council, նշվ. աշխ.: ՄՆՀ-ի մարքային մլուրթում
ստեղծվել է 2003թ., որը դեռևս ներակա է կատարելագործման:

¹⁵Anwar Yusuf Al-Abdullah, Sino-Arab Energy Cooperation: Problems,
Approach & Outlook, International Energy Security and Cooperation, SIIS,
Shanghai, 2004, p. 6. 1981թ. մայիսի 27-ին, ՄՀԽ-ի հիմնադրումից երկու օր
անց, ՉԺՀ-ի արտգործնախարար Հուան Հան շնորհավորական ուղերձ
հղեց ՄՀԽ-ի Գլխավոր քարտուղար Արդուլաս Բիչարային՝ հիմք դնելով
ՄՀԽ-ի կազմակերպության հետ ՉԺՀ-ի կապերի հաստատմանը: Այս
մասին տե՛ս

<http://www.fmprc.gov.cn/eng/wjwb/zjzj/gjs/gjzzyhy/2616/t15334.htm>.

¹⁶<http://www.fmprc.gov.cn/eng/wjwb/zjzj/gjs/gjzzyhy/2616/t15334.htm>.

¹⁷Նույն տեղում: 1997թ. հունվարին և 1999թ. հունիսին Սատոյան Արաբիա
կատարած իրենց այցելությունների ընթացքում ՉԺՀ-ի փոխարտգործնա-
խարար Տիան Չենայեյը և Մի Փեյդինը խորհրդակցական հանդիպումների
երկու փուլ անցկացրին ՄՀԽ-ի Գլխավոր քարտուղար Հոջեյանի հետ:
2002թ. ՉՉՀ-ի պետխորհրդի անդամ Ու Ին հանդիպում ունեցավ Գլխավոր
քարտուղար Ալ-Աբբասի հետ: 2002թ. ապրիլին ՉԺՀ-ի արտգործնախա-
րար Թան Միաստանը շնորհավորական հեռագիր ուղարկեց Ալ-Աբբասին՝
ՄՀԽ-ի Գլխավոր քարտուղարի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ:
2002թ. սեպտեմբերի 16-ին ՉԺՀ-ի արտգործնախարար Թան Միաստանը
հանդիպեց ՄՀԽ-ի երկրների արտաքին քարտուղարներին կամ նրանց
ներկայացուցիչներին և ՄՀԽ-ի Գլխավոր քարտուղար Ալ-Աբբասին՝
գլխավորապես կարծիքներ փոխանակելով ՉԺՀ-ՄՀԽ-ի հարաբերությունե-
րի, Իրաքի և ՄԱ-ի հիմնախնդիրների ուղղությամբ:

¹⁸Abdulaziz Sager, Saudi-Chinese Relations: Energy First, but Not Last, Arab
News, The Middle East's Leading English Language Daily, 23.1.2006.

<http://www.arabnews.com/?page=7§ion=0&article=76692&d=23&m=1&y=2006>.

¹⁴Lee Hudson Teslik, China-Gulf Economic Relations, Council Foreign Relations, 4.06.2008.

http://www.cfr.org/publication/16398/china_gulf_economic_relations.html. ԾՀԽ-ի շոքը երկրներ՝ Քուվեյթը, ԱՄԷ-ը, Կատարը և Սաուդյան Արաբիան յուրաքանչյուր շնչին մավթի առաքման բարձրագույն ցուցանիշ ունեն աշխարհում: ԾՀԽ-ի երկրներն ունեն մավթի ավելցուկ: Չինաստանն Լեճրգաձախ-աստար ապահանջների՝ ֆոսֆատների և այլումինի կարիք ունի, որոնք ԾՆՀ-ի երկրները կարող են առավել էժան արտադրել: Այլումինի ձուլման գործընթացը պահանջում է մեծ քանակությամբ մավթ:

²⁰Jia Hepeng, FTA to Help Diversify China's Energy Sources, China Business Weekly, 07.15.2004. <http://www.chinadaily.com.cn/english/doc/2004-07/15/content348779.htm>.

²¹Flynt Leverett and Jeffrey Bader, Managing China-U.S. Energy Competition in the Middle East, The Washington Quarterly, 29:1, Winter 2005-06, p. 191. Սաուդյան Արաբիայի ապացուցված մավթի պաշարները կազմում են 35.5 մլրդ տոննա՝ համաշխարհայինի 20%-ը:

²²Dan Blumenthal, Providing Arms China and the Middle East, The Middle East Quarterly, Vol. XII, No. 2, Spring, 2005.

²³Abdulaziz Sager, նշվ. աշխ.: Այդ րվում է նաև ազատ առևտրի գոտու ստեղծման վերաբերյալ 2004թ. ստորագրված պայմանագիրը:

²⁴Gaafar Karrar Ahmed, Towards Sino-Arab Partnership in the Energy Sector: Current Situation and Challenges, International Energy Security and Cooperation, SIIS, Shanghai, June 2004, pp. 69-70.

²⁵Hu Jianyi, Energy Development in China and its Cooperation with the Gulf Area, International Energy Security and Cooperation, SIIS, Shanghai, 2004, p.102.

²⁶Yang Guang, Sino-Middle East Energy Relations and Mutual-benefiting Cooperation, International Energy Security and Cooperation, SIIS, Shanghai, 2004, p. 122-123. Սաուդյան Արաբիայի ապացուցված մավթի պաշարները կազմում են 35.5 մլրդ. տոննա՝ կազմելով աշխարհի պաշարների 20%-ը. Իրանինը՝ երրորդ տեղում է, որի ապացուցված մավթի պաշարները կազմում են 17.2 մլրդ. տոննա՝ կազմելով աշխարհի պաշարների 10%-ը.

Իրաքը չորրորդ տեղում է՝ 15.8 մլրդ տոննա՝ կազմելով աշխարհի պաշարների 9%-ը, 5-րդ տեղում ԱՄՆ՝ 13.4 մլրդ. տոննա՝ 8%-ը, 6-րդում՝ Գուվեյթը՝ 13.2 մլրդ. տոննա՝ 8%-ը:

²⁷Lee Hudson Teslik, China-Gulf Economic Relations, նշվ. աշխ.:

²⁸Abdulaziz Sager, նշվ. աշխ.:

²⁹Lee Hudson Teslik, China-Gulf Economic Relations, նշվ. աշխ.:

³⁰Abdulaziz Sager, նշվ. աշխ.: Դա կապված էր, ի տարբերություն Արևմտադեղին, Ասիայում արաբների նկատմամբ կատաճանքի ու անվտանգության մթնոլորտի թացակայության հետ:

³¹Li Weijian, Energy of the Middle East and Peaceful Rise of China, International Energy Security and Cooperation, Shanghai, 2004, p. 189.

³²Նույն տեղում, էջ 187:

³³Այս մասին մանրամասն տե՛ս Zhu Shida, Some Ponders on US Image, International Review, SIIS, Vol. 38., Spring 2005, pp. 1-21.

³⁴Li Weijian, նշվ. աշխ., էջ 187: Խոսքը գնում է միջինասիական ու կովկասյան տարածաշրջանների և Եմբատահարայական Աֆրիկայի մասին:

³⁵FTA to Help Diversify China's Energy Sources, China Daily, 16.7.2004. <http://english.peopledaily.com.cn/200407/16/eng20040716149749.html>. Հարկ է նշել, որ թեև Չինաստանի իրաքյան բաղաթևանությունը ԾՀԽ-ի երկրների տեսանկյունից երկխմատ է եղել, այնուհանդերձ 2004թ. մայիսին ՉԺՀ-ը ՄԱԿ-ի ԱՆ-ին «ոչ պաշտոնական փաստաթուղթ» ներկայացրեց՝ առաջարկելով վերանայել ԱՄՆ-Միացյալ Թագավորության բանաձի նախագիծը: Չնայած Իրաքից ԱՄՆ-ի գլխավորությամբ 2005թ. հունվարից բազմազգ ուժերի դուրս բերման վերաբերյալ առաջարկը չընդունվեց, այնուհանդերձ բանաձեղ և ՄԱԿ-ի դերակատարության մեծացման հարցում նրա շեշտադրումը համապատասխանում էր տարածաշրջանի դիրքորոշման հետ: Այս մասին տե՛ս Abdulaziz Sager, նշվ. աշխ.:

³⁶Jia Hepeng, նշվ. աշխ.:

³⁷Zhang Haibing, New Development and Problems in China-ASEAN Regional Economic Cooperation, International Review, SIIS, Vol. 38, Spring 2005, pp. 73-85; Men Honghua, Participation, Creation and Domination. Promotion of Asian Integrity Centered On The Building Of International Institution, International Review, Vol. 37, Winter 2004, Beijing, pp. 5-18; China, GCC Set

to Start FTA Talks, Arab Press, The Middle East's Leading English Language Daily, Beijing, 9.12.2004.

<http://www.arabnews.com/?page=6§ion=0&article=55813&d=9&m=12&y=2004>; China, GCC Discuss FTA, Daily Times, Pakistan, 6.07.2004.

<http://www.dailytimes.com.pk/default.asp?page=story6-7-2004pg517>.

³⁸The Joint Press Communique Between the People's Republic of China and The Cooperation Council for the Arab States of the Gulf (GCC). <http://www.chinaconsulatesf.org/eng/xw/t142542.htm>. Պայմանագրով նախատեսվում էր նաև համագործակցության համատեղ հանձնաժողովի ստեղծում, որի պարտականությունն է կողմերի միջև ստորագրված պայմանագրերի ու արձանագրությունների կենսագործումը:

³⁹Jia Hepeng, նշվ. աշխ.:

⁴⁰FTA to Help Diversify China's Energy Sources, նշվ. աշխ.: Մոցի երկրներին էին պատկանում նավթի համաշխարհային պաշարների 45 % և նավթարդյունաբերության 20 %-ը:

⁴¹<http://china.org.cn/english/2004/jul/100533.htm>.

⁴²Yao Kuangyi, նշվ. աշխ., էջ 102:

⁴³China, GCC discuss FTA, նշվ. աշխ.:

⁴⁴Maha Akeel, GCC, China Discuss Free Trade Zone, Arab News, The Middle East's Leading English Language Daily, Jeddah, 28.04.2005. <http://www.arabnews.com/?page=6§ion=0&article=62883&d=29&m=4&y=2005>. Նրկու կողմերը համաձայնվեցին տարվա ընթացքում յուրաքանչյուր եռամսյակը մեկ հանդիպումների միջոցով շարունակել բանակցությունները:

⁴⁵FTA to Help Diversify China's Energy Sources, նշվ. աշխ.:

⁴⁶<http://english.people.com.cn/200601/20/eng20060120236872.html>.

⁴⁷China, GCC Set to Start FTA Talks, Arab Press, The Middle East's Leading English Language Daily, նշվ. աշխ.:

⁴⁸China, GCC Agree to Start FTA Talks, Xinhua News Agency, 7.07.2004. <http://china.org.cn/english/2004/Jul/100533.htm>.

⁴⁹<http://www.fmprc.gov.cn/eng/wjbg/gjs/gjzzyhy/2616/t15334.htm>.

⁵⁰Meng Yan, China To Begin Free Trade Talks With GCC, China Daily, 07.07.2004. http://www.chinadaily.com.cn/english/doc/2004-07/07/content_346014.htm.

⁵¹Lee Hudson Teslik, China-Gulf Economic Relations, նշվ. աշխ.:

⁵²The Chinese Ambassador to the Kingdom of Saudi Arabia, H.E. Mr. Yang Honglin, in an interview with GCC Business & Commerce Magazine, 2008/10/08. <http://www.chinaembassy.org.sa/eng/xwdt/t1517071.htm>.

⁵³<http://www.fmprc.gov.cn/eng/wjbg/gjs/gjzzyhy/2616/t15334.htm>; Jia Hepeng, նշվ. աշխ.:

⁵⁴Anwar Yusuf Al-Abdullah, նշվ. աշխ., էջ 3:

⁵⁵Gaafar Karrar Ahmed, նշվ. աշխ., էջ 58-59: ՉժՀ-ը զազ է ներկրում նաև ՅՄՆՆից:

⁵⁶Lee Hudson Teslik, China-Gulf Economic Relations, նշվ. աշխ.:

⁵⁷Anwar Yusuf Al-Abdullah, նշվ. աշխ., էջ 3:

⁵⁸Jia Hepeng, նշվ. աշխ.:

⁵⁹Lee Hudson Teslik, What are the Implications of a Reemerging "Silk Road"?, The Council On Foreign Relations, USA, 4.06.2008.

<http://www.cfr.org/publication/16398/>, 2007թ. ԱՄՆ-ի նավթի 20%-ը ներկրվում էր ԱՀԽ-ի երկրներից:

⁶⁰Mohammed Noman Galal, Energy Challenges in the 21-st Century: Implications for Modernization, Security and Cooperation in the Arabian Gulf Countries, International Energy Security and Cooperation, SIIS, Shanghai, 2004, p. 31. Խոսքը գնում է ԱՄՆ-ի իրարյան ներխուժման, Սիբիրյայի նկատմամբ սպառնալիցությունների կիրառման և Իրանի նկատմամբ լարված հարաբերությունների մասին:

⁶¹Lee Hudson Teslik, China-Gulf Economic Relations, նշվ. աշխ.:

<http://www.cfr.org/publication/16398/>.

⁶²Zhao Hongtu, New Features of Int'l Energy Security Situation, Contemporary International Relations, Vol. 15, No. 7, July 2005, p. 26.

⁶³Ma Zhengang, China's Responsibility and the "China Responsibility" Theory, China International Studies, CINS, Beijing, Summer 2007, p. 7-8.

⁶⁴Lee Hudson Teslik, From the Council on Foreign Relations, նշվ. աշխ.:

<http://www.cfr.org/publication/16398/>.

⁶⁵Liu Binjie, China's Philosophy on Foreign Affairs in the 21st Century. China in Peaceful Development, Beijing, 2006, p.101.

⁶⁶Zhao Hongtu, նշվ. աշխ., էջ 26:

⁶⁷China. Questions and Answers, Foreign Languages Press, Beijing, 2008, pp. 6-9. ՉԺՀ-ը Լենրգիայի մեծ սպառող ու միաժամանակ մեծ արտադրող է՝ Լենրգիայի տարեկան արտադրությանը աշխարհում զբաղեցնելով երկրորդ տեղը: Այն իր մեջ ընդգրկում է ամփի, հետազոտվող և արդյունահանվող մավթի ու գազի, ինչպես նաև Լեյոլոգիայի մարտի Լենրգետիկ հայրաստ պաշարներ: ՉԺՀ-ում յուրաքանչյուր շնչին հասնող գազի ու մավթի սպառումն ու դրանց ներկայումս իր ծավալներով զգալիորեն գիշում է աշխարհի զարգացած երկրներին՝ 20 անգամ միայն Տասպոնիային ու ԱՄՆ-ին միասին վերցրած: Այս մասին տե՛ս նաև Zhou Xingbao, China's Energy Situation, Its Energy Policy and international Energy Cooperation, China International Studies, CIIS, Beijing, Summer 2007, p. 75.

⁶⁸Zhou Xingbao, նշվ. աշխ., էջ 76-80:

⁶⁹Zhang Pei, Theories of International System and China's Peaceful Development, International review, Vol. 37, Winter 2004, pp. 61-62.

ԱՐՄԱՆ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ԱՀԱՐԵԿԿՉՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՎՈՂ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՀԱՐԵԿՉԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Միջազգային ահաբեկչության վերջին միտումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայելին Խորհրդային Միության փլուզումից և սուր պատերազմի ավարտից հետո գաղափարախառությանը ներշնչված ահաբեկչությունն ընդհանուր առմամբ անկում է ապրում, չնայած Հնդկաստանում, Նեպալում, Ֆիլիպիններում, Տասպոնիայում և Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում մարքսիստական և մատիստական խմբերի շարունակվող գործողությունների:

Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ կրոնական և Էթնիկական հիմքի վրա գործող ահաբեկչական խմբերը շարունակում են ակտիվ գործել և նրանց ահաբեկչությունը պատճառաբանված չէ գաղափարախոսությամբ¹: Հարավային և Հարավ-Արևելյան Ասիայի երկրների պարագայում այն ավելի շուտ էթնիկական կամ կրոնական մեծամասնության կողմից փոքրամասնությունների նկատմամբ կիրառվող անարդարությունից ստացված ցասումի արտահայտություն է:

Տարանջատվածության զգացումն ու ցասումի արտահայտումը պատճառաբանվում են տարբեր գործոններով, այն է՝ փոքրամասնությունների կողմից քաղաքական կամ տնտեսական ձգտումների արհամարհումը, անարդարության զգացումը և իրենց մշակույթի վրա արտաքին քաղաքական ազդեցության կամայնման ցանկությունը: Մյուս պատճառների շարքին, մասնավորապես անդրազգային իսլամական ահաբեկչական խմբերի զեպրում, կարելի է դասել Պաղեստինի նկատմամբ շարունակվող անարդարությունը, 80-ականների ընթացքում Աֆղանստանի բռնազբալումը խորհրդային զորքերի կողմից, ինչպես նաև 1991թ. պատերազմից հետո լայնածավալ արևմտյան զորքերի (մեծամասամբ բրիտանական) տեղակայումը Պարսից Սոցի տարածաշրջանում, հիմնականում՝ Սաուդյան Արաբիայում, որտեղ գտնվում են մահմեդականության սրբազույն վայրերը: Այդ զգացումներն ավելի խորացան ԱՄՆ կողմից Իրաքի գրավումից հետո:

ժամանակակից անդրազգային խլամական ահաբեկիչները որևէ տարբերություն չեն տեսնում 1980թ. Աֆղանստան սովետական զորքերի ներխուժման, 90-ականների սկզբին Պարսից ծոցի պատերազմի և 2003թ. իրականացված Իրաքի գրավման միջև: Ցանկացած ռազմական գործողություն մահմեդական բնակչության մեծամասնություն ունեցող երկրի հանդեպ նրանք դիտարկում են որպես արտաքին միջամտություն՝ ուղղված տարածաշրջանում երկրի քաղաքական և տնտեսական շահերի ամրապնդմանը: Ուստի թե՛ ԽՍՀՄ-ի ազդեցության բուլկացումը Աֆղանստանի պարագայում, և թե՛ ներկայումս ԱՄՆ-ի՝ արևմուտքի կողմից վերահսկվող Իրաքի կամ Աֆղանստանի քաղաքական և սոցիալական կիսատանների վրա, իրենք դիտում են որպես մեկ ընդհանուր պայքարի շարունակություն:

Ներկա փուլի խլամական ծայրահեղականությունն զարգացման և ամրապնդման ակունքները, մեր կարծիքով, պետք է փնտրել Պաղեստինի ինքնորոշման հարցի չկարգավորման ճգնաժամ և Խորհրդային Միության կողմից Աֆղանստանի երկարաժամկետ օկուպացման մեջ, ինչը մեծապես նպաստեց Աֆղանստանի մոջահեդիստների միավորմանը և նրանց գործողություններին արտաքին աջակցության տրամադրմանը՝ մասնավորապես Օսամա բին Լադենի արար վարձկանների կողմից: Հակազդման ինքնուրույն ընկած էր Իսլամի, որպես կրոնի, նկատմամբ վտանգի ընկալումը և, հետևաբար, այդ մարտահրավերին դիմակայելու անհրաժեշտությունը: Նույն զգացումով են ներկայումս հասնակված խլամական ծայրահեղական խմբավորումները Մերձավոր Արևելքի տարածաշրջանում, որոնցից շատերը պատրաստակամություն են հայտնում կամ ուղղակիորեն դիմակայում են ԱՄՆ-ի և կուլիցիայի զորքերին Իրաքում:

Ավելին, ԱՄՆ-ի հույսերը՝ ակտիվ միջամտություն ցուցաբերել Բալկաններում և աջակցել Բոսնիայի և Կոսովոյի մահմեդական բնակչությանը՝ ըստ Եուրյան նպատակ հետապնդելով շահել աշխարհի այլ տարածաշրջանների մահմեդականների համակրանքը, մասնավորապես՝ Մերձավոր Արևելքում, փաստորեն չարդարացան: Մերձավոր Արևելքի մահմեդական ծայրահեղականները ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի ներխուժումը Բալկաններ դիտեցին այս տարածաշրջանում հետապնդվող իրական ռազմավարական, քաղաքական և տնտեսական շահերից ուշադրությունը շեղելու փորձ:

Հարկ է նշել նաև, որ 80-ական և 90-ական թվականների սկզբին ի հայտ եկավ մահմեդականությունն ահաբեկչության մի նոր ֆենոմեն՝ Ալաեդդավոդական ահաբեկչություն (Մուսնի մեծամասնությունն ընդդեմ Հլա փոքրամասնության Պակիստանում և Աֆղանստանում): Եթե նախկինում մեծա իրավիճակը բնորոշ էր միայն քրիստոնեությանը (կարդիկները ընդդեմ բողոքականների Հյուսիսային Իռլանդիայում), ապա ներկայումս մահմեդականության մեջ ևս մեծամասնությանը պատկանող խմբերը (սուննիները) ահաբեկչական գործողությունների են դիմում ընդդեմ փոքրամասնություն կազմող շիաների՝ ստիպելով վերջիններին դիմել համարժեք քայլերի:

Մահմեդականությունն մեջ մեծամասնություն կազմող խմբավորումների ահաբեկչությունը փոքրամասնությունների նկատմամբ պայմանավորված չէ որևէ քաղաքական, տնտեսական կամ սոցիալական նկատառումներով, այլ նպատակ է հետապնդում պարտադրել փոքրամասնություններին ընդունել մեծամասնության կողմից կրոնական ռաժմոնի և ադանդների մեկնաբանությունը²:

90-ականներին երևան է զալիս մեկ այլ ֆենոմեն ևս՝ ահաբեկչական խմբավորումների օժանդակումը մասնավոր անձանց կողմից (Օսամա բին Լադենի), ինչպես նաև մասնավոր ընկերությունների օգտագործումը՝ առանց ուղղակիորեն ներգրավված լինելու դրանց մեջ:

Ի հավելումս «դասական» ահաբեկչական խմբերի, որոշ անհատներ կամ անհատների խմբեր հակված են իրականացնելու ահաբեկչական գործողություններ հասարակության կամ կառավարության դեմ: Դրա վրա օրինակներն են ճապոնական «Աում Սիբիրիյո» կրոնական խմբակը, որը 1995թ. մարտին ստրիկ գազի օգտագործմամբ սպանեց մի շարք անմող քաղաքացիների և ԱՄՆ-ի երկու քաղաքացիների կողմից 1995թ. ապրիլին Օկլահոմայում պայթեցրեց Ֆեդերալ կառավարության շենքերը:

Ահաբեկչական գործողությունների ծավալմանը մեծապես նպաստեց նաև ինտերնետի զարգացումը: Այն հեղափոխական ազդեցություն ունեցավ կապի միջոցների և գիտելիքների տարածման վրա: Միջոցառ հետախուզական և անվտանգության ապահովող գործակալությունները փորձում էին վերլուծել ինտերնետի քայքայական ազդեցությունը ահաբեկչության արագ ծավալվող տեմպերի վրա, հակաահաբեկչական գործակալությունների խնդիրները գեղարվ էլ ավելի էին բարդանում:

Հաղորդակցության այնպիսի ժամանակակից միջոցներ ինչպիսիք են բջջային հեռախոսները, ֆաքսը, արբանյակային կապը, ինտերնետը, հասարակական հեռախոսային խցիկները, ինտերնետ ակունքները, ժամանակավոր վարձույթով բջջային հեռախոսները, ինչպես նաև գաղտնագրման սարքավորումների մուտչելիությունը մինչ օրս անընթակալի օպերատիվ ճկունություն են տրամադրել ահաբեկիչներին:

Ավելին, ինտերնետի միջոցով անպատասխանատու տարրերի կողմից Ջամգվաձային ոչնչացման գեներ ստեղծելու մանրամասնությունների տարածումը նոր վտանգ է ստեղծում միջազգային հանրային համար: Այստեղ պետք է արձանագրել, որ բացի ԱՄՆ-ից և Նապոմիայից, նախկինում որևէ պետություն լուրջ ուշադրություն չէր դարձրել հակաահաբեկչական գործակալությունների՝ մոնամախայ սցենարով գործող ահաբեկչության դեմ պայքարելուն:

Համակարգիչների միջոցով աշխարհի ֆինանսական, տնտեսական, ռազմական, գիտական և տեխնոլոգիական ենթակառուցվածքների ցանցավորումը համակարգչին տիրապետող ահաբեկիչներին մեծ հնարավորություններ է ընձևում՝ տնտեսությանը գզալի վնաս պատճառելու համար: Այս ամենը հանգեցրեց նոր ֆենոմենի, որը կոչվում է «Ալիտուալ ահաբեկչություն»:

Միջազգային հակաահաբեկչության ոլորտում համագործակցությունը գզալորեն աճել է վերջին տասնամյակում, սակայն այն հիմնականում սահմանափակված է եղել հետախուզական տվյալների հաղորդման և ահաբեկչական միջադեպերի համատեղ հետախուզման ու հետաքննման շրջանակներում: Ավելի խորացված միջազգային համագործակցությունը բարդացվում են քաղաքական կամ աշխարհագրական նկատառումներով, մտալի չափազանց կարևոր է առանձին պետությունների փորձը ահաբեկչության դեմ պայքարելու բնագավառում, ինչը և մենք կփորձենք ցույց տալ Հնդկաստանի Հանրապետության օրինակի վրա:

1947թ. ի վեր, երբ Հնդկաստանը ձեռք բերեց անկախություն, ապստամբության և ահաբեկչության ձեռն կապված խնդիրները բավականին լուրջ էին երկրի տարրեր մասնրում: Ահաբեկչական գործողություններ էին տեղի ունենում Փանջաբ, Ջամմու և Քաշմիր նահանգներում՝ Պակիստանին հարող սահմանամերձ շրջաններում, երկրի հյուսիս-արևելքում՝ Մյանմարի և Բանգլադեշի մոտ, Նեպալի սահմանի մոտ գտնվող Բիհար

նահանգում: Որոշակի ահաբեկչական գործողություններ էին տեղի ունենում նաև Հնդկաստանի Անդրա Պրադեշ, Մադիյա Պրադեշ և Օրիսսա նահանգներում, որոնք չունեն օտարերկրյա պետությունների հետ ընդհանուր սահման:

Հնդկաստանի տարածքում տեղի են ունեցել նաև ահաբեկչական գործողություններ, որոնք ուղղված են եղել կառավարության կամ մեծամասնություն կազմող հինգու համայնքի դեմ: Ղրանց օրինակներն են 1993թ. մարտի 12-ին Մումբայում, ինչպես նաև 1998թ. փետրվարին Տամիլ Նադու նահանգի Կոիմբատուր քաղաքում տեղի ունեցած պայթյունները¹: Անցյալում Տամիլ Նադու նահանգում արձանագրված ահաբեկչական գործողությունները հիմնականում կապված էին Շրի Լանկայում գործող Տամիլ Էլշամի Ազատագրման Վագերիի հետ, որոնք ոչ միայն իաշվեհարպար էին տեսնում Հնդկաստանում ապրող իրենց քաղաքական հակառակորդներին հետ, այլև ուղղակիորեն մարտահրավեր նետեցին Հնդկաստանի կառավարությանը՝ 1991թ. մայիսին Չեննայում սպանելով Ռաջիվ Գանդիին, ում իրենք մեղադրում էին Շրի Լանկայի ներքին գործերին միջամտելու մեջ²:

Մեր կարծիքով, Հնդկաստանում տարբեր տեսակի պատամբական կամ ահաբեկչական շարժումների պատճառները հետևյալն են.

- **Քաղաքական** (մասնավորապես Ասսամում և Տրիպուրայում): Անկախությունից և ահաբեկչության աճին այդ նահանգներում նպաստեց կառավարության անկարողությունը՝ վերահսկել մահմադականների լայնածավալ ազդեցիկ ներգաղթը Բանգլադեշից, որոնք անմիջապես սկսեցին տնտեսական բարիքներ պահանջել իրենց համար՝ հիմնվելով նախկինում ունեցած հողի իրավունքից:
- **Տնտեսական** (հիմնականում Անդրա Պրադեշում, Մադիյա Պրադեշում, Օրիսսայում և Բիհարում): Վերոնիշյալ նահանգներում բացակայում էին հողային բարեփոխումները, գյուղական մասերում չափազանց բարձր էր չգրադվածության մակարդակը, հողատերերի հալածանքները չրավոր խափն կատարման և այլն: Այս տնտեսական բնույթի ցուցբերելը և սոցիալական անարդարության բազմաթիվ փաստերը նպաստեցին մարքսիստական և մատիստական գաղափարախոսությանը առաջնորդող ահաբեկչական խմբերի առաջացմանը:

- Լքնիկական հիմնականում Նազարյանում, Միգրանտում և Մանիպուլում, դեռևս խիստ արտահայտված է օտարեցման զգացողությունը:
- Կրոնական հիմնականում Փանջարում (մինչև 1995թ.) և Ջամմում և Քաշմիր մահաբգում (սկսած 1989թ-ից): Փանջարում որոշ սիկխու տարրեր, որոնք պատկանում էին տարբեր կազմակերպությունների, դիմեցին ահաբեկչական գործողությունների՝ Միկխների համար առանձին պետություն ստեղծելու նպատակով, որի ամունը պետք է լիներ Խալիստան: Անկախության պահանջը հիմնված էր այն համոզմունքի վրա, որ սիկխները առանձին ժողովուրդ են և իրենց զարգացումը չի կարող ապահովվել հինգու մեծամասնություն ունեցող միասնական պետության մեջ: Ամենաաղմկալի ահաբեկչական գործողությունը, անկասկած, Հնդկաստանի վաշչապետ Ինդիրա Գանդիի սպանությունն էր: Ինչ վերաբերվում է Ջամմում և Քաշմիր մահաբգների, ապա տարբեր կազմակերպություններին պատկանող մահմեդականները դիմեցին ահաբեկչական գործողությունների տարրեր և իրար հակառո պատճառներով: Այսպես օրինակ, «Ջամմում և Քաշմիրի ազատագրման ճակատը» ձգտում է անկախության ամբողջ Ջամմում և Քաշմիրի համար, այդ թվում՝ Հնդկաստանի, Պակիստանի և Չինաստանի մասերը: «Հիզբուլ Մուջահեդին» կազմակերպությունը ջանկարներ է անում և Քաշմիր հնդկական մահաբգ միացնել Պակիստանի հետ: Եթե անկախություն ցանկացողները ներկայացնում են իրենց պայքարը որպես մաջաադական, այլ ոչ կրոնական, ապա Պակիստանի հետ միացման գաղափարի կողմնակիցները ներկայացնում են իրենց պայքարը որպես զուտ կրոնական: Մյանշահակ կարելի է արձանագրել Օսամա բեն Լադենի և Ալ-Կադիայի Հնդկաստանի մահմեդական բնակչության հետ փոխադարձությունների առումով: Հայտնի է, որ Հնդկաստանը Ինդոնեզիայից հետո ունի ամենաշատ մահմեդական

ԱՄՆ-ում 2001թ սեպտեմբերի 11-ին տեղի ունեցած ահաբեկչական գործողություններից հետո, որոշ հետաքրքրական փաստեր կարելի է արձանագրել Օսամա բեն Լադենի և Ալ-Կադիայի Հնդկաստանի մահմեդական բնակչության հետ փոխադարձությունների առումով: Հայտնի է, որ Հնդկաստանը Ինդոնեզիայից հետո ունի ամենաշատ մահմեդական

բնակչությունը՝ մոտ 140 մլն.: Սակայն միայն չափազանց նվազ մասն է դիմել ահաբեկչական գործողությունների զուտ Ալ-Կադիայի կամ այլ օտարերկրյա կազմակերպության ադրանքով: Երկրի մահմեդականների ճնշող մեծամասնությունը հավատարիմ է մնում կառավարությանը: Ավելին, եթե վերլուծենք նրանց պահվածքը միջազգային ահաբեկչության կտրվածքով, ապա հետաքրքրական փաստեր կարձանագրենք: 1980-ականները ընթացքում, աշխարհի բոլոր մասերից մոտ 6000 մահմեդականներ ուղևորվեցին Աֆղանստան և միացան մոջահեդիններին՝ պայքարելու Խոնդիստան գոյրերի դեմ: Որևէ հնդիկ մահմեդական երբևից չի գնացել Աֆղանստան: Ըստ որոշ տեղեկությունների, հարյուրավոր մահմեդականներ վերապատրաստվել են Պակիստանում զտնվող մադրասանություն (ուսումնական հաստատություն), սակայն որևէ հնդիկ մահմեդական երբևէ չի գնացել Պակիստան: Երբ ԱՄՆ-ը և կոալիցիոն ուժերը սկսեցին ռմբակոծել քաղաքների դիրքերը Աֆղանստանում 2001թ. հոկտեմբերի 7-ին, հարյուրավոր մահմեդականներ թողոր հյույսեր կազմակերպեցին աշխարհի տարբեր երկրներում, սակայն Հնդկաստանում մնան հյույսերի քանակություն աննշան էր: Ավելին, հարյուրավոր մահմեդականներ, բացառությամբ հնդիկ մահմեդականների, մեկնեցին Պակիստան և Աֆղանստան՝ պայքարելու կոալիցիոն ուժերի դեմ: Վերոնիշյալ փաստերը վկայում են, որ մինչ օրս Օսամա բեն Լադենի և Ալ-Կադիան չնչին ազդեցություն ունեն Հնդկաստանի մահմեդական համայնքի վրա:

Մտաւոր հաշվարկներով, Հնդկաստանում ահաբեկիչների զոհ է դարձել ավելի քան 35.000 ամենդ քաղաքացի⁶:

Հնդկաստանի Հանրապետությունը ահաբեկչության նկատմամբ պոլեզրել է համապատասխան մոտեցում, որը ենթադրում է հստակ տարբերակում՝ «ներքին» և «միջազգային» ահաբեկչության միջև, ինչպես նաև «բիկի» ու «օտարերկրյա» ահաբեկիչների միջև: Հնդկաստանը հավատում է, որ հակաահաբեկչական գործողությունները կարող են արդյունավետ լինել միայն ազգային կոմսենտուսի վրա հիմնված քազմակողմանի մոտեցման առկայության պարագայում: Արդյունավետ հակաահաբեկչական քաղաքականության հիմքն է համարվում կայուն ժողովրդավարությունը, արդյունավետ կառավարումը, որը տարբերակում չի դնում մեծամասնության և փոքրամասնության միջև և Հնդկաստանի բոլոր քաղաքացիներին ճանաչում է օրենքի առջև հավասար:

Հնդկաստանն անարևելյան հակագրման խնդիրը դիտում է մասամբ քաղաքական, մասամբ էլ քրեական խնդիր՝ օրինակաբարձր և ու կարգի, ինչպես նաև ներքին կայունության ապահովման ենթատեքստում: Վերոհիշյալ խնդիրները հակագրվում են քաղաքական, վարչական և գործնական մոտեցումների համատեղությամբ՝ դիտարկելով ոստիկանությանը որպես հակագրման հիմնական, իսկ զինված ուժերը՝ այլընտրանքային միջոց:

«Հակահարկություն» և ոչ թե «պայքար անարևելյան դեմ», «Քարոզարշավ անարևելյան դեմ» և ոչ թե «պատերազմ անարևելյան դեմ» այս կարգախոսներով են առաջնորդվում Հնդկաստանի անվտանգության ապահովման պատասխանատու մարմինները և պետական այրերը: Այս ամենը ենթադրում է ոչ ռազմական դիմակայում և անարևելյան դեմ ոչ ռազմական միջոցներով պայքարելու անհրաժեշտություն, որը հիմնված է հետևյալ մի շարք սկզբունքների վրա: Նախ և առաջ, երկրի զինված ուժերը նախատեսված են բացառապես հակառակորդ երկրի զինված ուժերի հարձակմանը դիմակայելու համար, այլ ոչ թե պետությաննից գոյի ապստամբ կամ անարևելյան խմբավորումների դեմ, բացառությամբ այնպիսի դեպքերի, երբ ոստիկանությունը և ռազմականացված այլ ստորաբաժանումներն ի վիճակի չեն դիմակայելու վերջիններին: Նման դեպքեր արձանագրվել են 1960-ական և 1970-ական թվականներին, երբ զինված ուժերը ստիպված էին միջամտել Նագա և Միզո կազմակերպված և կոմվենցիոնալ ապստամբությունների օգտագործմամբ գործող ապստամբության և անարևելյան խմբավորումների դեմ, որոնք 1984թ. որոշ սիկսական կազմակերպությունների կողմից ուժով պահվող Լմբիտասրի Մսկե Տանտրի ազատագրման ժամանակ, ինչպես նաև Պակիստանից դեպի Ջամմու և Քաշմիր նահանգը զինված գրոհայինների ներխուժումը կանխելու նպատակով:

Հետաքրքրական է, որ անգամ այդպիսի դեպքերում, զինված ուժերի կիրառումը սահմանափակվում է միայն թեթև և միջին սպառազինություններով զինված հետևակային ուժերի օգտագործմամբ: Երբքը չեն օգտագործվել օդային ուժեր կամ չափազանց մեծ մարդկային զոհեր հասցնելու ունակությամբ օժտված սպառազինություններ, ինչն անբնորոշելի է մարդասիրական օրենքներով⁷:

Այս ամենը հստակ ցույց է տալիս, որ հակահարկչական պայքարի առաջնային միջոցը հանդիսանում է ոստիկանությունը, որն էլ պատասխանատու է կանխարգելման, հայտնաբերման, հետաքննության և հետապնդման համար:

Ընդհանուր առմամբ, Հնդկաստանի հակահարկչության կառուցվածքը հետևյալն է.

- Նահանգային ոստիկանությունը և նրանց համապատասխան հետախուզական ստորաբաժանումները: Համաձայն երկրի ֆեդերալ սահմանադրության, կարգ ու կանոնի ապահովման և պահպանման պատասխանատվությունն ընկնում է տվյալ նահանգի ոստիկանության վրա: Նյու Դելիում գտնվող կենտրոնական կառավարությունը կարող է միայն տրամադրել խորհրդատվություն, ինչպես նաև ֆինանսական, ուսումնական և այլ կարգի օժանդակություն ու կիսվել վերջիններին նեո իր տրամադրության տակ գտնվող օպերատիվ հետախուզական տվյալներով: Հետագա քայլերի ձևափոխման պատասխանատվությունը կրում է նահանգային ոստիկանությունը:
- Ազգային հետախուզական կառույցը բաղկացած է ներքին գործերի նախարարության «Հետախուզական Գործակալությունից», որը պատասխանատու է ներքին հետախուզության համար, Կառավարության քարտուղարության «Հետազոտության և վերլուծության բաժնից», որը պատասխանատու է արտաքին հետախուզության համար, այնուհետև «Պաշտպանության հետախուզական գործակալությունից», որը հիմնադրվել է 2002թ. և շինված ուժերի գլխավոր տնօրինության հետախուզական թևը: «Հետախուզական Գործակալությունը» անարևելյան առնչվող տեղեկություններ է հավաքում երկրի ներսում, իսկ «Հետախուզության և վերլուծության բաժնից»՝ երկրից դուրս: Մյուս երկու գործակալությունները հավաքում են միայն մարտավարական բնույթի հետախուզական տվյալներ այն շրջաններում, որտեղ չափազանց մեծ է զինված ուժերի հնարավոր տեղակայումը (Ջամմու և Քաշմիր, Նագալանդ և այլն):
- Ֆիզիկական անվտանգության ապահովման գործակալություններ. Արդյունաբերության անվտանգության կենտրոնական ուժե-

րը պատասխանատու են օդանավակայանների և կարևորություններկայացնող այլ կառույցների ֆինկիական անվտանգության համար, Ազգային անվտանգության գլխորդիայի հիմնական նպատակն է միջամտել ահաբեկչական գործողություններին, օրինակ պատանդների պահում, օդանավի զավթում և այլն, Հիտառկ պաշտպանության խումբը պատասխանատու է Հնդկաստանի վարչապետի և նախկին վարչապետների անվտանգության համար:

- Ռազմականացված ստորաբաժանումներ. Այդպիսի ստորաբաժանումներին է պատկանում մասնավորապես *Կենտրոնական պահեստային ոստիկանությունը* և *Մահմանային անվտանգության ուժերը*, որոնք աջակցում են ոստիկանությանը հակահաբեկչական գործողությունների ընթացքում, սակայն միայն այն դեպքերում, երբ իրենք հատուկ հրամանով կանչվում են դեպքերի վայր:

- Չինված ուժերը: Ինչպես նշեցինք վերը, զինված ուժերը երկրորդական տեղ են զբաղում Հնդկաստանի հակահաբեկչական համակարգում, սակայն պետք է նշել, որ վերջիններիս դերը շատ բարձր է Ջամմու և Քաշմիր մահանգում, ուր ոստիկանական ուժերը չեն բավարարում Պակիստանից ներթափանցող ահաբեկիչներին կասեցնելու գործում:

2002-2003թթ. ստեղծվեցին երկու այլ լրացուցիչ ստորաբաժանումներ: Առաջինը դա Հետախուզական Գործակալության կազմում *Հակահաբեկչական միասնական կենտրոնի* ստեղծումն է, որի հիմնական նպատակն է մեկ տեղում հավաքել տարբեր գործակալությունների հակահաբեկչական գործողությունների համար պատասխանատու սպաների, որոնք պետք է համատեղ վերլուծել տարբեր տեղերից ստացվող տեղեկատվությունը և հետևեն հետագա գործողություններին: Երկրորդը՝ Հնդկաստանի արտաքին գործերի նախարարության համակարգում *Հակահաբեկչական բաժնի* ստեղծումն է: Այն պատասխանատու է լինելու հակահաբեկչական գործողությունների դիվանագիտական ասպեկտների համադրման համար: Պետք է նշել, որ վերջին բաժնի ստեղծումը կրկնօրինակում է ԱՄՆ պետդեպարտամենտի համապատասխան բայրը²:

Ինչևէ, վերոհիշյալ անվտանգության համակարգի փոփոխություններն, անկասկած, պայմանավորված են քրիտանական գաղութատիրության ժամանակաշրջանից ժառանգած խնդիրներով, երկրի աշխարհադարակն ուղիղով և պարտավորված են ժողովրդավարական գործընթացներով: Իրանը կոչված են լուծելու յուրահատուկ խնդիրներ, որոնցից մենք կառահմանցենք Հնդկաստանի կողմից հակահաբեկչության խնդրի նկատմամբ կիրառվող քաղաքական, տնտեսական, սոցիալական և դիվանագիտական մոտեցումները:

Քաղաքական մոտեցման հիմնական նպատակը ահաբեկիչների կողմից երկրում ժողովրդավարական գործընթացների խափանումը կանխելն է: Այստեղ պետք է արձանագրել, որ ահաբեկչական բռնությանը քույլ չի տրվել կասեցնելու բնորոշությունները Հնդկաստանի կուսխ-սրևելքում, Փանջաբում և Ջամմու և Քաշմիր մահանգում, ինչը տարբեր խմբավորումներին պատկանող ահաբեկիչների հիմնական նպատակն է: Մասնավորապես Ջամու և Քաշմիր մահանգում բավականին կայուն կերպով անց են կացվում տարբեր մակարդակի բնորոշություններ, որոնց երկրի իշխանությունները դիտորդի կարգավիճակով պարբերաբար հրավիրում են օտարերկրյա դիվանագետներին: Զգալիորեն հանդարտվել է քաղաքական իրավիճակը Նագալանդ, Միզորամ և Տրիպուրա մահանգներում: Մշտապես բարեկարգվում է ներքին անվտանգության կառավարումը և իշխանությունը: 2002թ. դեկտեմբերին Հնդկաստանի երկրորդ ոչ-կառավարական Ազգային Անվտանգության Խորհրդատվական հանձնաժողովը մի շարք առաջարկություններ է ներկայացրել ներքին անվտանգության կառավարումն ամրապնդելու ուղղությամբ: 2003թ. փետրվարին կայացած հանձնաժողովի նիստը նմանատիպ առաջարկություններ է կատարել՝ վերոհիշյալ գործընթացները բարելավելու նպատակով³: Մշտական ուղադրություն է դարձվում Հնդկաստանում իշխող կուլիցիայի և բնորոշության, կենտրոնական և մահանգային իշխանությունների, ինչպես նաև ահաբեկչության խնդրով զբաղվող կառավարական և ոչ-կառավարական հաստատությունների միջև ազգային կոնսենսուսի ապահովմանը:

Տնտեսական մոտեցման հիմնական նպատակներից է հանդիսանում երկրի անխափան տնտեսական կյանքի ապահովումը, հատկապես ահաբեկչական գործողություններից տուժած կամ վտանգի տակ գտնվող մասերում: 1980-ական թվականների ընթացքում, Փանջաբում գործող

ահաբեկիչների քիլային էր հանդիսանում մահանգի գյուղատնտեսությունը: Երկրի կառավարությունն ի վիճակի եղավ կանխելու մեծան վտանգը և մահանգը շարունակաբար բարձր ցուցանիշներ էր արձանագրում բերքահավաքի ընթացքում: Իսկ Ջամմու և Քաշմիր մահանգում ահաբեկիչները փորձեր էին կատարում կասեցնել քննությունների ընթացքը: Հնդկաստանի կառավարությունը, պետական բյուջեի հաշվին, բոլոր շրջանավարտներին ապահովում էր ինքնաբերի տոմսերով, որպեսզի ենթարկվողությունը ընձեռնի վերջիններիս հանձնելու քննությունները երկրի այլ մահանգներում: Ահաբեկիչները հարձակվում էին մահ այն հնդկի գործարարների վրա, որոնք այցելում էին Ջամմու և Քաշմիր մահանգ՝ տեղական ապրանքները գնելու նպատակով: Ի պատասխան այդ վտանգի, կառավարությունը կազմակերպեց մշտապես գործող Քաշմիրի ապրանքների ցուցահանդես-վաճառք Նյու Դեյլիում և Հնդկաստանի այլ մասերում, և իր հաշվին ապահովում էր Ջամմու և Քաշմիր մահանգի արտադրողների մասնավորյալն այդ ցուցահանդեսներում: 1992 և 1995թ. ահաբեկիչները սկսեցին հարձակվել մահանգ այցելող օտարերկրյա զբոսաշրջիկների վրա՝ փորձելով հարված հասցնել զբոսաշրջության ոլորտին: Ի պատասխան, կառավարությունը միջոցներ ձեռնարկեց տեղական զբոսաշրջությունը զարգացնելու ուղղությամբ՝ հասնելով զգալի հաջողությունների, մասնավորը, եթե հաշվի առնենք այն փաստը, որ տարեկան Ջամմու և Քաշմիր մահանգ է այցելում մոտ 300000 զբոսաշրջիկ:

Հնդկաստանը հատուկ ջանքեր է գործադրում, որպեսզի ահաբեկչության դեմ պայքարը բացասական ազդեցություն չընթացի տվյալ տեղանքի տնտեսական զարգացման վրա: Այդ շրջաններին հատկացվում են հատուկ միջոցներ, նպատակ ունենալով հավասար մակարդակի վրա պահել տվյալ շրջանի և երկրի մյուս մասերի տնտեսական հավասարակշռությունը: Գյուղալ առումով, երկրի կառավարությունը ձգտում է ապահովել, որ երկրի տարբեր մասերում իրականացվող հակա-ահաբեկչական գործողություններն ազդեցություն չունենան ամբողջ երկրի զարգացման տնայնի վրա: Անգամ այն ժամանակաշրջանում, երբ երկիրը դիմակայում էր ահաբեկչական գործողություններին, Հնդկաստանի տնտեսությունը շարունակում էր իր բնականոն աճը. զգալիորեն զարգացավ տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառը, բարձրացավ դպրոցների և հանալ-

սարանների կրթական մակարդակը և ավելացան երկրի արտադրության պահուստները:

Սոցիալական մտեցումը ենթադրում է կրթական մակարդակի բարելավում և չգբաղվածության հարցի լուծումը: Հնդկաստանի առաջատար կրթական հաստատությունները մասնաճյուղեր են հիմնում ահաբեկչությունից տուժած մահանգներում: Հատուկ պայմանավորվածություններ են գործում վերոհիշյալ մահանգներից երկրի այլ մահանգների ԲՈՒՀ-երում ուսանողների ուսումը կազմակերպելու ուղղությամբ: Հնդկաստանի իշխանությունները մեծ ուշադրություն են դարձնում մահ այսպես կոչված մադրասանների (հիմնականում մզկիթներին կից գործող տեխնիկական կրթություն ապահովող դպրոցներ) կրթական ծրագրերին: Ի տարբերություն Պակիստանի, ուր գործում է մոտ 8000 մադրասա, Հնդկաստանում գործում են 35000 մադրասաներ:

Մեծ խնդիրներ գոյություն ունեն Ջամմու և Քաշմիր մահանգում բժշկական օգնություն տրամադրելու քննազավառում: 1989թ. ի վեր մեծ բանակությունը ինդոուներ լքել են մահանգը, ուստի վերոհիշյալ ծառայությունները բնակչությանը տրամադրում են զինված ուժերը: Բոլոր տեսակի բժշկական ծառայությունները և դեղորայքները տրամադրվում են բնակչությանը անվճար կամ շատ մատչելի գներով:

Գլխամագիստական Հնդկաստանի իշխանությունները մեծ ուշադրություն են դարձնում ահաբեկչության դեմ դիվանագիտական միջոցներով պայքարին: Հաշվի առնելով այն փաստը, որ Հնդկաստանի իշխանությունները շարունակաբար մեղադրում են Պակիստանին՝ ինչպես միջազգային, այնպես էլ տեղական հեղկական ահաբեկիչներին ստատարելու մեջ, ապա հասկանալի է, թե ինչ տեղ է հատկացվում այդ պայքարում արտաքին գործերի նախարարությանը: Վերջինս զգալիորեն ակտիվացել է սկսած 1992թ.-ից:

Ի լրումն, արտաքին գործերի նախարարությունը զգալի դեր ունի օտարերկրյա կառավարությունների հետ ահաբեկչության դեմ պայքարի համատեղ փոխհամագործակցային ծրագրերի մշակման գործում: Այս համագործակցությունն ավելի կարևորվեց 2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչական գործողություններից հետո, երբ քննարկեց ԱՄՆ-ի Անվտանգության խորհրդի 1373 բանաձևը, որը կոչ է անում բոլոր ԱՄՆ-ի անդամ երկրներին սերտորեն համագործակցել ահա-

բեկչության դեմ¹⁰։ Հնդկաստանի կառավարությունը, արտաքին գործերի նախարարության կառույցի ներքո, հիմնել է Համատեղ աշխատանքային խմբեր ահաբեկչության դեմ պայքարող մի շարք պետությունների հետ, որոնք գործում են բավականին հաջողությամբ։

Հնդկաստանի Հանրապետությունը որդեգրել է այն մտայնությունը, որ ցանկացած խնդրի լուծում կարելի է գտնել միայն վարժեր ժողովրդավարության մեջ, ուր քաղաքացիները չպետք է կարիք գգան դիմելու ահաբեկչական գործողությունների՝ իրենց դժգոհություններն արտահայտելու համար։ Այն պայմաններում, երբ առանձին խմբեր կամ անհատներ, չնայած կառավարության կողմից իրենց մտահոգություններին արձագանքելու պայմաններում այնուամենայնիվ կղիմեն ահաբեկչությանը, իրենց դեմ կկիրառվի օրենքի ուժն ամբողջ խստությամբ։ Հնդկաստանի իշխանությունները գերծ են մնում ուժի չափազանց խիստ կիրառումից և բոլոր խնդիրների լուծումը տեսնում են միայն երկխոսության մեջ՝ լիովին գիտակցելով, որ ահաբեկչության խնդիրները չեն կարող ունենալ պարզ լուծումներ։ Նազալանդ մահանգում ապստամբական և ահաբեկչական շարժումների կասեցումը տևեց 19 տարի, Միզորամ մահանգում իրավիճակի հանդարտեցումը տևեց 20 տարի և 14 տարի պահանջվեց Փանջաբում ահաբեկչական խնդիրները լուծելու համար։ Եվ դա է հանդիսանում այն գրավականը, որ Հնդկաստանի իշխանությունները հավատում են, որ հնարալիր է վերջի վերջո խաղաղ և ժողովրդավարական ճանապարհով լուծել ոչ միայն երկրի տարբեր մասերում չլուծված հարցերը, այլ նաև Ջամմա և Քաշմիր մահանգի խնդիրը։

Հողվածում արտահայտված տեսակետները և գնահատականները հանդիսանում են հեղինակիներ։

ARMAN ISRAELYAN

*THE CHANGING NATURE OF TERRORISM AND INDIAN
ANTI-TERRORIST POLICY*

The terrorism is gradually changing in nature and that has become more obvious after the end of Cold War and collapse of the Soviet Union. The radical leftist groups resorting to terrorism are giving way to well-organized and well financed transnational religious terrorist groups. The overall increased

during the past 15 years of terrorism motivated by a religious imperative reflects the convergence of new adversaries, motivations and tactics affecting terrorist patterns today. International terrorism's general tendency toward increasing lethality is also reflected in the percentage of international terrorist incidents that result in one or more fatalities. The terrorist attacks on 9/11 in USA were the most deadly examples of this trend.

The post-1945 de-colonization struggles brought a wave of terrorist campaigns affecting North-and sub-Saharan Africa, South and South-East Asia, and the Middle East. This paper examines the effects of terrorism on India, the largest democracy in the world, and how the country is responding to it. Since its independence in 1947; India has been facing the problem of insurgency and terrorism in different parts of the country. India has faced exclusively terrorist movements in Punjab and Jammu and Kashmir, northering Pakistan and part insurgent part terrorist movements in the North-East bordering Myanmar and Bangladesh, in Bihar bordering Nepal and in some interior parts of the country such as Andhra Pradesh, Madhya Pradesh and Orissa not having international border.

In our research we also look at the political, economic, ethnic and religious causes of the various insurgent and terrorist movements in India.

Almost 35000 innocent civilians were killed by terrorists in India. The first act with large civilian casualties took place in Mumbai in 1993, when the bomb exploded in city center, claiming 250 lives.

It must be noted, that India adopts a comprehensive approach to terrorism, making a distinction between domestic and international terrorism as well as between indigenous and foreign terrorists and believes the counter terrorism can be effective only if there is a multi pronged approach based on national consensus.

The whole Indian national security set up has been revamped in order to act and react properly to the problem of terrorism. The main locus of counter-terrorism operations in on State Police, while the Armed Forces have limited functions.

Also, there are perceptual differences between Indian approach to counter terrorism and that of other major countries. "Counter-terrorism" and

not "combating terrorism" and "campaign against terrorism" and not "war against terrorism" are the views of India's internal security managers.

The basic idea is that there are no quick solutions to terrorism. The ideal objective of any democracy should be to create healthy conditions of governance in which people do not feel the need to resort to terrorism for finding answers to their achieved. It took India 19 years to bring the insurgency in Nagaland under control, 20 years to restore normalcy in Mizoram and 14 years to put an end to terrorism in Punjab. So there is a belief among Indians that the same should eventually happen in Jammu and Kashmir and other areas, where terrorism is not yet under control.

ՄԱՐԻԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՎԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՃԱՊՈՆԻԱՅԻ ԲԱՎԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՐ 1973թ. ՆԱՎԹԱՅԻՆ ՃՂՆԱԺԱՄ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1973թ. հոկտեմբերի 6-ին սկիզբ առավ արաբ-իսրայելական շորտրդ պատերազմը: Պատերազմող կողմերի միջև կրադադարի հաստատման, ԱՄՆ-ի և արևմտյան պետությունների նկատմամբ ճնշում գործադրելու նպատակով, Նավթ Արդյունահանող Արաբական Երկրների Կազմակերպությունը (ՆԱԱԵԿ)¹ ի դեմս Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆեյսալի², 1973թ. հոկտեմբերի 20-ին հայտարարեց նավթի գների 70%-ով բարձրացման և 5%-ով նավթարդյունահանման կրճատման վերաբերյալ³: ՆԱԱԵԿ-ի կողմից Իսրայելի գլխավոր դաշնակիցներ համարվող Միացյալ Նահանգներին ու Նիդեռլանդներին նավթի վաճառքի արգելման որոշմամբ սկիզբ դրվեց վերջիններիս նկատմամբ արաբական նախարարյունահանող երկրների կողմից կիրառվող նավթային լծարգոյին: Նավթն իբրև թաղաքական և տնտեսական զենք օգտագործելու մասին ՆԱԱԵԿ-ի որոշումը տնտեսական յուրք ճգնաժամի պատճառ դարձավ արաբական նավթից կախում ունեցող երկրներում՝ ԱՄՆ-ում, Արևմտյան Եվրոպայի երկրներում և Ճապոնիայում⁴:

Փաստորեն ճապոնիան ևս արաբների կողմից անտրդակիտրեն դատվեց «ոչ բարեկամական» երկրների շարքին, որի հետևանքով ճապոնիա արտահանվող նավթի ծավալը կրճատվեց 10%-ով: Ըստ 1973թ. տվյալների՝ ճապոնիա է ներկրվել քնդհանուր առմամբ 290 մլն. տ. նավթ, որը կազմում էր ամբողջ համաշխարհային արտահանման մոտ 8%-ը: Տոկիո ներկրվող նավթի մոտ 43%-ն առաքվում էր արաբական երկրներից, ընդ որում՝ Սաուդյան Արաբիայից՝ 10,7%, Քուվեյթից՝ 6,9%⁵, իսկ 16%-ն առաքվում էր Ինդոնեզիայից⁶: Այդ հանգամանքը բացասական ազդեցություն ունեցավ «ժազող արևի երկրի» տնտեսության վրա, քանի որ վերջինիս սպառողական էներգիայի 70%-ը ստացվում էր նավթից⁷:

Հարկ է նշել, որ մինչ 1973թ. Տոկիոն գլխավորապես համագործակցում էր Իրանի հետ⁸, որը մինչ 1973թ. էմբարգոն, ապառվում էր ճապոնիա առաքվող նավթի 41%-ը⁹: Սակայն 1973թ. էմբարգոյի կիրառումից հետո ԱՄՆ-ի կողմից իրանական նավթի մեծաքանակ ներկրման արգ-

¹ Mark Juergensmeyer. The worldwide rise of religious nationalism, Journal of International Affairs, Vol. 50, No. 1, Summer 1996.

² Brian Michel Jenkins. Future Trends In International Terrorism. Rand, 1985, pp. 71-76.

³ <http://www.thehindu.com>

⁴ <http://www.timesofindia.com>

⁵ <http://www.Satp.org> (South Asia Terrorism Portal)

⁶ В.Я. Белокрепичский, В.И. Москаленко, Т.Л. Шаумян. Южная Азия в мировой политике, М., Международные отношения, 2003, стр. 29.

⁷ Saji Cherian. Terrorism and Legal policy in India.-New Delhi, 2002, p.199.

⁸ "India Today", -New Delhi.

⁹ "Strategic Analysis", -New Delhi.

¹⁰ Aparna Pande. South Asia: Counter-Terrorism Policies And Postures After 9/11". New Delhi, 2002, p. 96.

յունքում համապատասխանաբար կրճատվեց Շապոնիա առաքվող նավ-
քի քանակը (1973թ.՝ 31% նավք)¹⁰:

Ստեղծված իրավիճակում, երկիրն անհրաժեշտ վառեֆառուքով
ապահովվում նպատակով, Շապոնիան հարկադրված էր վերանայել արա-
բական երկրների նկատմամբ իր դիրքորոշումը՝ հստակ գիտակցելով, որ
այսպիսես նավք գնելու համար գուտ ֆինանսական միջոցներն անբավա-
յար են¹¹: Այդ մասին անգամ հայտարարել է ԱՄՆ-ում Շապոնիայի նախ-
կին դեսպան Ֆունիիկիո Տոգոն՝ նշելով. «Շապոնիան մինչև 1973թ. Մեր-
ձավոր Արևելքի երկրների հետ կշռադատված քաղաքականություն չէր
վարում, քանի որ դրանի առկայության դեպքում մենք միշտ կարող էինք
նավք գնել»¹²:

Այսպիսով, արաբական երկրների հետ հարաբերությունների
հաստատման առաքելությանը Մերձավոր Արևելք գործուղվեց Շապո-
նիայի վախճարչապետ Տակեո Մյկիին, որը 1973թ. դեկտեմբերի 10-28-ը
աշցելեց Եգիպտոս, Իրաք, Կատար, Զուվեյր, Արաբական Միացյալ Էմի-
րատյուններ (ԱՄԷ), Սաուդյան Արաբիա, Սիրիա: Փոխվարչապետին հա-
ջողվեց նավթարդյունահանող արաբական երկրներին *համաձեռ*, որպեսզի
վերջիններս Շապոնիային դասեն «բարեկամական տերությունների»
շարքին¹³:

